# ԱԼԻՔ

Ազգային, հասարակական, քաղաքական, մշակութային օրաթերթ

92-ՐԴ ՏԱՐԻ, ԹԻՒ 205 (24486), հատավաճառ՝ 20000 ռիալ

سال نودودوم - شماره (۲٤٤٨٦) ۲۰۵ - تکشماره ۲۰۰۰۰ ریال - ۸ صفحه

ՉՈՐԵՔՇԱԲԹԻ
11 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2023

چهارشنبه – ۱۹ مهر ۱۴۰۲

E-mail: info@alikonline.ir www.alikonline.ir

آلیک

روزنامه سیاسی، اجتماعی، فرهنگی


Իսլ. յեղափոխութեան առաջնորդ.

## «ՍԻՈՆԻՍՏԱԿԱՆ ՌԵԺԻՄՆ ԱՆՈՒՂՂԵԼԻ ՊԱՐՏՈՒԹԻՒՆ Է ԿՐԵԼ»




«ԱԼԻՔ» - Սիոնիստական ռեժիմն անուղղելի պարտութիւն է կրել ինչպէս ռազմական, այնպէս էլ հետախուզական առումով: Այս մասին երէկ՝ հոկտեմբերի 10-ին, ԶՈՒ-ի սպայական համալսարանների համատեղ աւարտական արարողութեան ժամանակ յայտարարել է Իսլ. յեղափոխութեան առաջնորդ այաթ. Սէյէդ Ալի Խամենէին:

Անդրադառնալով սիոնիստական ռեժիմի դէմ պաղեստինեան ուժերի կազմակերպած «Ալ-Աքսայի փոթորիկ» գործողութեանը, այաթ. Խամենէին ասել է. «Մեհրի 15-ից այս կողմ (հոկտ. 7, «Ալ-Աքսայի փոթորիկ» գործողութեան մեկնարկը) սիոնիստական ռեժիմը թէ՛ ռազմական, թէ՛ հետախուզական առումով անուղղելի պարտութիւն է կրել: Պարտութեան մասին բոլորն են խօսում, ես շեշտում եմ դրա անուղղելի լինելը: Այդ կործանարար երկրաշարժը կարողացաւ քանդել օկուպացիոն վարչակարգի որոշ հիմնական կառոյցները, որոնք անհնար է հեշտութեամբ վերականգնել»:

Բարձր գնահատելով պաղեստինցի մարտիկների նուիրւածութիւնն ու սխրանքները, Իսլ. յեղափոխութեան առաջնորդն նշել է. «Մենք համբուրում ենք գործողութեան հմուտ եւ խելացի կազմակերպիչների եւ պաղեստինցի երիտասարդների ճակատներն ու ձեռքերը, բայց նրանք, ովքեր ասում են, թէ վերջին իրադարձութիւնները պաղեստինցիների կատարածը չէ, սխալւում են: Իհարկէ ողջ իսլամական աշխարհը պարտաւոր է աջակցել պաղեստինցիներին, բայց այս գործողութիւնը հէնց պաղեստինցիների գործն է, եւ այս սխրագործութիւնը մեծ քայլ կը լինի Պաղեստինը փրկելու համար»:

Խօսելով ստեղծւած իրավիճակի պատճառների մասին, այաթ. Խամենէին ասել է. «Սիոնիստներն իրենց գործողութիւններով աղէտի մատնեցին իրենց: Երբ դաժանութիւնը եւ յանցաւորութիւնը չափն անցնում են, երբ գազանութիւնը հասնում է գագաթնակէտին, պէտք է փոթորկի սպասել»:

---

### ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

## ՊԱՂԵՍՏԻՆԵԱՆ ՓՈՐՁՆ ՈՒ ՄԵԶ ԱՆՀՐԱԺԵՇՏ ԴԱՍԵՐԸ

Հոկտեմբերի 7-ի առաւօտեան, երբ լրահոսի կիզակէտում յայտնւեցին «Ալ-Աքսայի փոթորիկ» ռազմական գործողութեան վերաբերեալ լուրերը, ակնյայտ էր, որ սա ոչ թէ պաղեստինա-իսրայէլական հակամարտութեան հերթական սրացումն է, այլ լայնածաւալ յարձակում՝ պատերազմ, որն անսպասելի էր, եւ անակնկալի բերեց բոլորին:

Նոկդաուն վիճակում յայտնւած իսրայէլական բանակի խուճապը պատկերած կադրերը, իսրայէլական բնակավայրերում ընթացող մարտերը, կաթւածահար վիճակում յայտնւած կառավարութիւնը, պառակտւած ու ամենաներքեւի մակարդակի իջած հասարակութիւնը, միջազգային հանրային կարծիքի մօտ փշրեցին «ամենակարող» հրէական պետութեան անխոցելի թւացող հեգեմոնիայի վերաբերեալ բոլոր պատրանքները: Սա պատերազմի առաջին երկու օրւայ համայնապատկերն էր:

Այս համատեքստում այլեւս երկրորդական խնդիր է դարձել այն, թէ ինչ աւարտ կունենայ այս պատերազմը կամ կը յաջողի՞ արդեօք Իսրայէլին շտկել մէջքն ու փրկել իրավիճակը, թէ՝ ոչ: Կարեւորը ինքը՝ «Ալ-Աքսայի փոթորիկ» գործողութիւնն ու դրա՝ մինչ այժմ գրանցած յաջողութիւնների հիման վրայ պաղեստինա-իսրայէլական հակամարտութեան կարգաւորման գործընթացում ուժերի իսկայ տեղաշարժն ու առկայ հաւասարումների խախտումն է, ինչը կարելի է ենթադրել, որ պաղեստինեան կողմի գլխաւոր նպատական էր, քանի որ այս կամ նմանատիպ այլ գործողութիւնների արդիւնքում պաղեստինցիների վերջնական յաղթանակի ու բռնագրաւած տարածքների ազատագրման մասին խօսելը մեղմ ասած, պարզամտութիւն կը լինի:

Իսկ ինչ դասեր է անհրաժեշտ քաղել պաղեստինա-իսրայէլական այս պատերազմից: Սա այն գլխաւոր հարցն է, որը թւում է, թէ ամենաշատը պէտք է յուզի մեզ:

1993 թւականի սեպտեմբերի 13 ստորագրւած փաստաթղթով, որը յայտնի է որպէս «Օսլոյի գործընթաց», սկիզբը տրւեց մի գործընթացի, որը ենթադրում էր պաղիստինա-իսրայէլական հակամարտութեան քաղաքական լուծում:

«Օսլոյի գործընթացը» սակայն, անհրաժեշտ ժամանակն ընձեռեց Իսրայէլին՝ ամրացնելու իր ռազմավարչական վերահսկողութիւնը գրաւեալ տարածքներում, ամրապնդելով իր գերիշխանութիւնը Յորդանան գետի արեւելեան հատւածի եւ Արեւելեան Երուսաղէմի վրայ: Այսպիսով Իսրայէլն «Օսլոյի գործընթացն» օգտագործեց պաղիստեանն տարածքների գաղութացումն անվերադարձ դարձնելու համար: Դրա վերջին ակորդը «Աբրահամի համաձայնագրի» շրջանակում արաբական երկրների հետ յարաբերութիւնների կարգաւորումն էր, որի գլխաւոր նպատակներից մէկը պաղեստինեան դատի հարցը վերջնականապէս թաղելն էր:

«Ալ-Աքսայի փոթորիկ»-ը եկաւ խառնելու բոլոր խաղաքարտերն ու պաղեստինեան կողմին պարտադրւող խաղի բոլոր կանոնները: Պաղեստինա-իսրայէլական հակամարտութեան կարգաւորման շուրջ ստեղծւած կոնսենսուսն այլեւս մեծ հաշւով առ ոչինչ է դարձել եւ, թէեւ, դեռեւս ոչ ոք չի բարձրաձայնում այդ մասին, այդուհանդերձ կասկածից վեր է, որ հակամարտութեան խաղաղ կարգաւորման գործընթացն այլեւս անհնար է պատկերացնել նախկին ընթացքով, որտեղ միակողմանի զիջումներ անողը եւ անընդհատ նահանջողը պաղեստինեան կողմն էր:

Պաղեստինցիներն իրականում ի ցոյց դրեցին խաղի պարտադրւող պայմաններն առ ոչինչ դարձնելու եւ աղէտաբեր գործընթացները կասեցնելու մաստեր կլաս: Եւ սա հէնց այն գլխաւորն է, որն անհրաժեշտ է մեզ, եթէ, իհարկէ, ցանկանում ենք վերադարձնել Արցախն ու պահել Հայաստանը:

Իսկ դրա համար մենք պէտք է գիտակցենք, որ.

(Շար. 8-րդ էջում)

---

Արմէն Պետրոսեան.

## «Իսրայէլա-պաղեստինեան պատերազմին Իրանի ներգրաււածութեան մասին յայտարարութիւնները մեծապէս քարոզչական բնոյթ են կրում»



«ԱԼԻՔ» - Իսրայէլա-պաղեստինեան հակամարտութեան սրման առաջին ժամերից սկսած իրանական լրատւամիջոցները տարածաշրջանում Իսրայէլի եւ Ադրբեջանի միջեւ եղած յարաբերութիւնների կործանարար հետեւանքները բացայայտող նոր հրապարակումներ կատարեցին, մասնաւորապէս իրանական ԻՌՆԱ գործակալութիւնը ծաւալուն յօդւած հրապարակեց եւ անդրադարձաւ Ադրբեջանին զինելու իսրայէլական քաղաքականութեան հետեւանքներին եւ Արցախի անկման ուղղութեամբ դրա ազդեցութեանը: Շեշտւեց, որ Թէլ Աւիւի նաւթի 65 տոկոսն ապահովում է Բաքուն, իսկ Ադրբեջանի սպառազինութեան ներմուծման ծաւալների աւելի քան 60 տոկոսը կազմում է իսրայէլական զինամթերքը: Արաբագէտ Արմէն Պետրոսեանի հետ զրոյցում փորձեցինք պարզել Պաղեստինեան ՀԱՄԱՍ շարժման յարձակումները կապւա՞ծ են արդեօք ազդեցութեան հէնց տւեալ հարթութեանը:

Արմէն Պետրոսեանը նախ արձանագրեց, որ աննախադէպ էր ՀԱՄԱՍ-ի յարձակման ծաւալները, եւ այն վերջին 50-տարիներին տեղի ունեցած ամենալայնածաւալ յարձակումն էր:

«Անհրաժեշտ է արձանագրել, որ

(Շար. 8-րդ էջում)

---

## Թեհրանահայութիւնն արցախահայութեան կողքին է

(Տես 8-րդ էջում)





---

«Ազգ կոչւում է մարդկանց այն մեծ խումբը, որ դարեր շարունակ ապրելով միեւնոյն բնական ու պատմական միջավայրում, իր կուլտուրային վերաբերող բոլոր հարցերը լուծել է իր համար ինքնուրոյնաբար: Ստեղծել է ազգային մէկ ընդհանուր ոգի, ազգային ստեղծագործութեան ինքնուրոյն ձեւեր, ազգային յատուկ բնաւորութիւն, եւ նոյնիսկ ազգայն առանձնայատուկ ֆիզիկական եւ հոգեբանական տիպ»,-

**ԳԱՐԵԳԻՆ ԽԱԺԱԿ (1867-1915),**
**դաշնակցական անւանի մտաւորական, հրապարակախօս եւ հրապարակագիր**




ARAM®
coffee
ԱՐԱՄ
قهوه آرام սուրճ
فروشگاه مرکزی:
قائم مقام فراهانی-شماره ۶۴
88303478 եւ 88308730
www.aramcoffee.com
instagram:aram__coffee

# ՌԴ-ի եւ Իրանի ԱԳ նախարարները քննարկել են իրավիճակն Անդրկովկասում եւ պաղեստինա-իսրայէլական հակամարտութիւնը



Իրանական կողմի նախաձեռնութեամբ հոկտեմբերի 10-ին հեռախօսազրոյց է տեղի ունեցել Ռուսաստանի Դաշնութեան արտաքին գործերի նախարար Սերգէյ Լաւրովի եւ Իրանի Իսլամական Հանրապետութեան արտաքին գործերի նախարար Հուսէյն Ամիր Աբդոլլահեանի միջեւ: Այս մասին յայտնում է ՌԴ ԱԳՆ մամուլի ծառայութիւնը:

«Արտաքին գործերի գործակալութիւնների ղեկավարները մտքեր են փոխանակել մերձաւորարեւելեան ներկայիս օրակարգի շուրջ՝ շեշտը դնելով պաղեստինա-իսրայէլական հակամարտութեան յաջորդ սրման վրայ: Ընդգծուել է զինուած դիմակայութեան շուտափոյթ դադարեցման եւ իրավիճակի հանգուցալուծման կարեւորութիւնը՝ յայտնի միջազգային իրաւական հիմքով:

Քննարկուել է Անդրկովկասում տիրող իրավիճակը: Նախարարները հանդէս են եկել Հարաւային Կովկասի համար «3+3» խորհրդատւական տարածաշրջանային պլատֆորմի շրջանակներում համատեղ աշխատանքի արագ վերսկսման օգտին:

Անդրադարձ է կատարուել երկկողմ համագործակցութեան փոխադարձ հետաքրքրութիւն ներկայացնող մի շարք հարցերի»,- նշւում է հաղորդագրութիւնում:

**«News.am»**

---

ՀԱՄԱՍ-ի ղեկավար.

## «Իսրայէլցի գերիների հարցը չի քննարկւի, քանի դեռ ռազմական արշաւը չի աւարտուել»



Պաղեստինի ՀԱՄԱՍ խմբաւորման քաղաքական բիւրոյի ղեկավար Իսմայիլ Հանիէն ասել է, որ «դիմադրութեան ուժերի կողմից պահւող գերիների եւ պատանդների» վերաբերեալ քննարկումներ չեն անցկացւի, քանի դեռ ռազմական արշաւը չի աւարտուել: Այս մասին յայտնում է «haaretz.com»-ը:

Աւելի վաղ հաղորդուել էր, որ Իսրայէլի տարածքում զոհուել է 900, վիրաւորուել 2,400, առեւանգուել եւ Գազայի հատուած է տարուել 100-150 մարդ:

**«Tert.am»**

---

Վարդան Ոսկանեան.

## «Հիբրիդային պատերազմներում սմարթֆոնն ու սոցիալական ցանցերն այլեւս անփոխարինելի զէնքեր են»

Իրանագէտ Վարդան Ոսկանեանը գրում է.

«Պաղեստինեան դիմադրութիւնը քարոզչական պատերազմների վարման փաստացի նոր մարտավարութիւն է կիրառում:

Այդ մարտավարութեան շրջանակներում սոցցանցերի դարաշրջանում սովորական սմարթֆոնը քարոզչական տիրոյթում աշխատում է այնպէս, ինչպէս ամենաառաջադէմ զէնքը մարտադաշտում:

Ընդորում, պաղեստինեան կողմից զուգահեռաբար առաջ է մղւում երկու տեղեկատւական ասք (նարատիւ)՝ պաղեստինեան դիմադրութեան մարտիկների հերոսացման ու իսրայէլական բանակի անպարտելիութեան առասպելի ջախջախման, ինչպէս նաեւ Գազայում քաղաքացիական բնակչութեան հումանիտար աղէտի ներկայացման:



Անկախ ամէն ինչից, մի բան պարզ է՝ արդի հիբրիդային պատերազմներում սմարթֆոնն ու սոցիալական ցանցերն այլեւս անփոխարինելի զէնքեր են, որոնց ազդեցիկ օգտագործման դասական օրինակ ցոյց տուեցին, որքան էլ տարօրինակ թւայ, ոչ թէ աշխարհի առաջադէմ բանակները, այլ հէնց պաղեստինցիները»:

**«Yerkir.am»**

---

Վարուժան Գեղամեան.

## «Ֆրանսիան Սիւնիքում հիւպատոսութիւն է բացում հետախուզական նպատակով»

Հայաստանի իշխանութեան կողմից Արցախն ամբողջութեամբ Ադրբեջանին յանձնելուց յետոյ Հայաստան այցելեց Ֆրանսիայի արտաքին գործերի նախարար Քեթրին Կոլոնան:

Ֆրանսիայի արտգործնախարարը յայտարարեց, որ Ֆրանսիան ռազմական կցորդ կը նշանակի Երեւանում եւ հիւպատոսութիւն կը բացի Սիւնիքում:

«Մենք ամրապնդում ենք մեր համագործակցութիւնը Հայաստանի հետ պաշտպանութեան ոլորտում, կունենանք ռազմական կցորդ Երեւանում, շուտով նաեւ հիւպատոսութիւն կը բացենք Սիւնիքի մարզում՝ սահմանամերձ հատուածում»,- ասաց Կոլոնան:

Պատմական գիտութիւնների թեկնածու, թուրքագէտ Վարուժան Գեղամեանի համար Ֆրանսիայի կողմից Սիւնիքում հիւպատոսութիւն բացելու պատրաստակամութիւնն ամենեւին էլ հայկական շահը սպասարկելու տիրոյթում չէ:

«Ֆրանսիայի ներկայութիւնը պայմանաւորուած է նրանով, որ այդ երկիրը, կորցնելով Աֆրիկայում իր դերակատարութիւնը, հիմա ցանկանում է Հարաւային Կովկասում ազդեցութիւն ունենալ, յետոյ այդ ազդեցութիւնն այլ տեղ վաճառելու համար: Դրանից բացի, Ֆրանսիան հանդիսանում է կոլեկտիւ Արեւմուտքի գլխաւոր բանակցողը Հայաստանում այն պարզ պատճառով, որ Հայաստանում ունի դրական ընկալում, թէեւ պատմականօրէն դրա հիմքը չկայ: Հիմա այդ երկիրը Սիւնիքում հիւպատոսութիւն է ցանկանում ունենալ՝ բնաւ ոչ հիւպատոսական ծառայութիւններ մատուցելու համար»,- «168.am»-ի հետ զրոյցում ասաց Վարուժան Գեղամեանը:

Նրա խօսքով՝ դժւար է պատկերացնել, որ Կապանում յայտնուեն մեծածաւալ զբօսաշրջիկներ, որոնց անհրաժեշտ է հիւպատոսական ծառայութիւններ մատուցել, Սիւնիքը նաեւ Հայաստանի ամենաֆրանկոֆոն հատուածը չէ, որով պայմանաւորուած՝ հիւպատոսութեան կարիք ունենայ:

«Պարզ է, որ Սիւնիքում հիւպատոսութիւնն ունենալու է խիստ ռազմական՝ հետախուզական նպատակ, որը ծառայելու է կոլեկտիւ Արեւմուտքին: Պէտք է յիշել, որ Սիւնիքը Մերձաւոր Արեւելքի ամենակարեւոր 2-3 կէտերից մէկն է, որտեղ բոլորն ունեն խաղաղադրոյք»,- ասաց Վարուժան Գեղամեանը:

**«168.am»**

---

## Արցախի առաջնորդներին ռուսները չեն յանձնել Բաքւին, նրանք թաքստոցներում կամ ՌԴ ռազմաբազայում չեն եղել





Արցախի իշխանութիւնները երեք տարի չպատրաստուեցին ադրբեջանական յարձակմանը, կային մարդիկ, որոնք ամէն ինչ արեցին, որ այս օրը գայ: Այս մասին «24News»-ի «Յետագիծ Նարեկ Գալստեանի հետ» հաղորդման շրջանակներում ասել է Արցախի ԱԺ «Արդարութիւն» խմբակցութեան պատգամաւոր Մետաքսէ Յակոբեանը:

«Արցախի իշխանական խմբակցութիւնը աւելի շատ զբաղուած էր ոչ թէ Արցախի, այլ նախագահի փրկութեամբ, որը չստացւեց»,- ասել է նա: Անդրադառնալով այն խօսակցութիւններին, որ Արցախի առաջնորդներին Ադրբեջանին են յանձնել ՌԴ խաղաղապահները, Մետաքսէ Յակոբեանը հերքեց այդ լուրերը՝ ասելով, որ դրանք չեն համապատասխանում իրականութեանը:

Այն հարցին, թէ հնարաւո՞ր է, որ որոշ արցախցիներ որոշեն վերադառնալ իրենց տներ՝ Յակոբեանը նկատեց, ոչ դա չի բացառւում, սակայն անհրաժեշտ են մեխանիզմներ, որոնցով կերաշխաւորւի՝ ադրբեջանցիների հետ կողք-կողքի չեն ապրելու:

**«24News»**

---

Հրանտ Մելիք-Շահնազարեան.

## «Քանի դեռ Արցախի նախկին պաշտօնեաները եւ ռազմագերիները բանտարկուած են, Հայաստանն ու Արցախը ոչ մի շանս չունեն»



Քանի դեռ Արցախի նախկին պաշտօնեաները եւ ռազմագերիները բանտարկւած են, Հայաստանն ու Արցախը ոչ մի շանս չունեն:

Այս մասին «Ֆէյսբուք»-եան իր էջում գրել է քաղաքագէտ Հրանտ Մելիք-Շահնազարեանը:

«Արցախի ապագան մեծապէս կախուած է այն բանից, թէ ինչպէս ենք մենք՝ որպէս ժողովուրդ վերաբերւում հայկական երկրորդ պետութեան ղեկավարների թշնամական բանտարկութեան մէջ գտնուելու հանգամանքին:

Ամբողջ աշխարհի հայութիւնն այսօր պէտք է մէկ բռունցք դառնայ եւ պայքարի Բակօ Սահակեանի, Արկադի Ղուկասեանի, Արայիկ Յարութիւնեանի, Դաւիթ Իշխանեանի, Ռուբէն Վարդանեանի, Դաւիթ Մանուկեան, Լեւոն Մնացականեանի եւ Դաւիթ Բաբայեանի շուտափոյթ ազատ արձակւելու համար: Իհարկէ, նաեւ մեր միւս ռազմագերիների խնդիրները չի կարելի անտեսել, բայց նշւածներն առաջնահերթ են:

Եթէ մենք ուզում ենք հետագայում Արցախի համար պայքարելու իրաւունք ստանալ, առաւել եւս կարգավիճակ պահանջել, ուրեմն այդ պայքարը պէտք է ոչ մի վայրկեան չդադարի:

Անկախ բոլոր օբիեկտիւ եւ սուբիեկտիւ հանգամանքներից՝ այդ մարդիկ են մեր ազգային արժանապատւութեան այսօրւայ չափորոշիչը: Քանի դեռ նրանք բանտարկւած են, Հայաստանն ու Արցախը ոչ մի շանս չունեն: Սրա մասին պէտք չէ շատ ու երկար խօսել: Բայց այս խնդրի լուծման մասին պէտք է անընդհատ մտածել ու աշխատել:

Նորից եմ կրկնում՝ դրանից է կախուած Արցախի ապագան: Ես հաւատում եմ, որ այն դեռ կարող է լուսաւոր լինել»:

**«Yerkir.am»**

---

Գեղամ Մանուկեան.

## «Ռուբէն Վարդանեանը եղել է եղբօրս մեքենայում, ադրբեջանցիները նրանց միասին են ձերբակալել»

Բաքւի կողմից գերեվարւած Արցախի ՊԲ նախկին փոխհրամանատար, գեներալ-մայոր Դաւիթ Մանուկեանը դեռեւս կապ չի հաստատել ընտանիքի հետ, ընտանիքն ունի որոշակի շփումներ «Կարմիր Խաչ»-ի հետ: Այս մասին «24News»-ի «Յետագիծ Նարեկ Գալստեանի հետ» հաղորդման շրջանակներում յայտարարել է ԱԺ «Հայաստան» խմբակցութեան պատգամաւոր, գերեվարւած Դաւիթ Մանուկեանի եղբայր Գեղամ Մանուկեանը:

«Այս պահին կայ այնքան տեղեկութիւն, որը կայ բաց համացանցում: Ակնկալում ենք, որ առաջիկայ օրերին «Կարմիր Խաչ»-ը կայցելի նրան, որից յետոյ տեղեկութիւններ կը ստանանք»,- ասել է նա: Մանուկեանը դժւարացաւ նաեւ նշել,




թէ արդեօք իր եղբայրը կա՞ր Ադրբեջանի կողմից շրջանառող «ցուցակներում», որտեղ գրւած էին պոտենցիալ գերեվարման ենթակայ արցախցի առաջնորդների անունները:

Նա նաեւ չհերքեց այն տեղեկութիւնները, որ Դաւիթ Մանուկեանին, նրա տիկնոջն ու Արցախի նախկին պետնախարար Ռուբէն Վարդանեանի միասին են ձերբակալել, յետոյ կնոջը թոյլ տուել վերադառնալ Երեւան:

# «The Armenian Patient», կամ՝ Հայաստանը՝ քաղաքական մոլագարութեան ճիրաններում



*«168.am-ը գրում է. Նիկոլ Փաշինեանի իշխանութեան պահպանման (հակա)ֆենոմենը խորութեամբ հասկանալու համար կարեւոր է քննարկել ոչ միայն դա ապահովող ներքին ու արտաքին քաղաքական, աշխարհաքաղաքական նախադրեալները, այլ նաեւ նրա անձնական, հոգեբանական գործոնները, դրանց վրայ խարսխուած վարքագիծը:*

*Արցախն ու Հայաստանն արդէն երեքուկէս տարի անցնում են դժոխային արհաւիրքների միջով՝ հազարաւոր մարդկային կորուստներ, Արցախի հայաթափում, Հայաստանին սպառնացող նորանոր գոյաբանական մարտահրաւէրներ… Նիկոլ Փաշինեանն այս բոլոր աղէտների կենտրոնում է, դրանց մի մասի սադրողը, միւսների՝ ամորֆ հետեւողը, որոշները՝ կանխել չկարողացողը…*

*Միջին վիճակագրական նորմալ մարդու կանխավարկածով, նման իրավիճակում յայտնուած անձը պէտք է լինէր սարսափելի հոգեվիճակում, ունենար մղձաւանջային ապրումներ, մեղքի անասելի զգացում:*

*Այդ նոյն կանխավարկածին ենթակայ մարդը հէնց այդ ամենի ազդեցութեան տակ նուազագոյնը կանգ կառնէր՝ սեփական մեղաւորութիւնը չաւելացնելու մղումով կը դադարեցնէր աղէտալի ընթացքը գոնէ այն մասով, որը պայմանաւորուած է իր քաղաքական լինելիութեամբ ու մասնակցութեամբ: Նիկոլ Փաշինեանը, մինչդեռ, առաջնորդւում է տրամագծօրէն հակառակ կանխավարկածով: Իւրաքանչիւր աղէտ, ամէն մի կորուստ, հերթական արհաւիրք կարծես աւելի է ամրապնդում նրան ներքնապէս՝ դրդելով նորանոր վնասարարութիւնների՝ պետութեանն ու հասարակութեանն աւելի մեծ հարուած հասցնելու վճռականութեամբ:*

*Կայ տպաւորութիւն, որ Նիկոլ Փաշինեանը հոգեկան բաւարարուածութիւն, իւրատեսակ նոր աւիւն, լիցքաւորում է ստանում աղէտներից ու պարտութիւններից, եւ ինչպէս մի անգամ խոստովանել է, ըստ ամենայնի՝ անկեղծօրէն, հպարտանում է պարտութիւններով: Հաւանաբար հոգեբանութիւնը, այլ գիտակարգեր կը կարողանան այս դէպքն ու իրավիճակը բացատրել ակադեմիական լեզւով եւ ախտորոշել պացիենտին: Բայց քանի դեռ դա եւ դրան յաջորդող քայլերը տեղի չեն ունեցել, Հայաստանն ու հայ հասարակութիւնը շարունակելու են գտնուել պացիենտի փորձանըմուշի կարգավիճակում, որը ծառայում է նրա՝ աղէտներից ու պարտութիւններից փառուրելու պահանջմունքի բաւարարմանը:*

*Առաջին հայեացքից այս իրավիճակը թւում է հակատրամաբանական, որովհետեւ բանականութիւնը հրաժարւում է ընդունել իրողութիւնը, որ մարդը կարող է երջանկանալ այլոց ու սեփական պետութեան դժբախտութիւններով: Բայց դա մօտաւորապէս նոյնպիսի անոմալիա է, ինչպիսին պատահում է սեփական զոհերի արիւնից չյագեցող սերիական մարդասպանի պարագային. իւրաքանչիւր յաջորդ զոհի հետ մոլագարն իրեն աւելի ուժեղ է զգում ու պատրաստ նոր ոճրագործութեան:*

*Նիկոլ Փաշինեանի դէպքում տարբեր է մոլագարութեան դրսեւորումը. այն արտայայտւում է ոչ թէ սեփական ձեռքերն ուղղակի իմաստով արիւնոտելով, այլ «քաղաքական գործիքակազմով»: Բայց դրանից խնդրի էութիւնն ու ողբերգականութիւնը չի փոխւում, ինչպէս որ սպանողի համար էական չէ՝ մարդասպանն իր գործն անում է Վագների երաժշտութեա՞ն, թէ՞ թուրքական մուղամի հնչիւնների ներքոյ:*

*Արցախը՝ կորսուել, Հայաստանն էլ յայտնուել է գոյաբանական սպառնալիքների առաջ քաղաքական դեգրադացման պատճառով: Դրա սկզբնական շրջանն արտայայտուել է փողոցային, էժանագին պոպուլիզմով, ընթացքն ուղեկցուել է իշխանական այլասերմամբ, իսկ վերջին փուլը դրսեւորւում է քաղաքական մոլագարութեամբ:*

*Այս մղձաւանջային ընթացքը դադարեցնելու նախապայմանը, առաջին անհրաժեշտ քայլը, իհարկէ, մոլագարի հեռացումն է: Բայց խնդրի հիմնարար լուծման, մոլագարութեան՝ համաճարակի վերածուելու ներուժ ունեցող ախտից ապաքինման համար պէտք է վերացնել դրա գոյացման պատճառները, եթէ կարճ՝ ապադեգրադացնել քաղաքականութիւնը, որի հետեւանքով պետութիւնը կապահովագրուի մանիակալ հակում ունեցողների կողմից զաւթուելու վտանգից:*

---

Արսէն Գասպարեան.

# «Հայաստանը նորից միակողմանիօրէն ճանաչեց Ադրբեջանի տարածքային ամբողջականութիւնը»



*«Այս յայտարարութեամբ մենք նորից միակողմանիօրէն ճանաչեցինք Ադրբեջանի տարածքային ամբողջականութիւնը՝ սա մէկ: Երկրորդը՝ Ալիեւը լուծել է իր գրեթէ բոլոր հարցերը եւ չմասնակցեց այդ բանակցութիւններին, որովհետեւ այդ ֆորմատը երեւի թէ սպառուած է իր համար այս փուլում: Եւ նա նաեւ խուսափեց պատասխանատուութիւն ստանձնի այն ամենի համար, ինչ տեղի ունեցաւ Արցախում, այսինքն՝ էթնիկ զտումների եւ բռնի տեղահանման համար»,- այսպէս արձագանգեց քաղաքական գիտութիւնների դոկտոր, «Ex Oriente» Հայաստանի արեւելագէտների միութեան նախագահ Արսէն Գասպարեանը: «Առաւօտ»-ի «Առերեսում» հաղորդաշարի ընթացքում նրան խնդրել էինք մեկնաբանել Գրանադայում ընդունուած յայտարարութեանը, թէ «Նրանք հաւատարիմ են մնում Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ յարաբերութիւնների կարգաւորմանն ուղղուած բոլոր ջանքերին՝ հիմնուած Հայաստանի (29 հազար 800 քկմ.) եւ Ադրբեջանի (86 հազար 600 քկմ.) ինքնիշխանութեան, սահմանների անձեռնմխելիութեան եւ տարածքային ամբողջականութեան փոխադարձ ճանաչման վրայ»:*

*Անդրադարձանք նաեւ ՌԴ-ի եւ ԵՄ-ի հեռակայ բանավէճին, թէ ով է դաւաճանել հայ ժողովրդին: «Բոլորի համար ակներեւ է, որ Ռուսաստանը դաւաճանել է հայ ժողովրդին… Ադրբեջանը ռազմական գործողութիւն իրականացրեց, եւ խաղաղապահների կողմից նոյնիսկ չնչին արձագանգ չեղաւ»,- ասել էր Եւրոմիութեան խորհրդի նախագահ Շառլ Միշէլը «Euronews»-ի հարցազրոյցում: «Ում կովը բառաչի՝ քոնը թող լռի»,- հակադարձել էր նրան ՌԴ նախագահ Վլադիմիր Պուտինը: Իսկ ՌԴ ԱԳՆ պաշտօնական ներկայացուցիչ Մարիա Զախարովան աւելի վաղ էր յայտարարել, թէ Ղարաբաղում վերջին իրադարձութիւնները ցոյց տուեցին, որ ԵՄ-ն դաւաճանեց Հայաստանին, իսկ եւրոպացի դիտորդները դաւաճանեցին հայերին: Ըստ Զախարովայի՝ նրանք խոստումներ տուեցին, ապա պաշտօնական Երեւանին հերթական ծուղակը գցեցին. «Բրիւսէլը լուռ հետեւել է՝ ինչպէս են ռուս խաղաղապահները օգնում Լեռնային Ղարաբաղից Հայաստան տեղափոխուող բնակչութեանը»:*

*Հայաստանում այս պնդումներին շատերն արձագանգեցին «Երկուսդ էլ ճիշտ էք» արտայայտութեամբ:*

*Մինչդեռ Արսէն Գասպարեանն ասաց. «Ընդհանրապէս՝ քաղաքականութեան մէջ դաւաճանել բառն օգտագործելը ծիծաղելի է: Պետութիւնների շահերը փոխւում են: Դաւաճանում են ամուսիններն իրար, պետութիւնների դաւաճանութիւնը ո՞րն է: Ի՞նչ խօսք են ձեզ տուել, որ դաւաճանեն»:*

---

«EURACTIV».

# Ալիեւը ԵՄ-ի սիրելի բռնապետն է





*Գրանադայում ԵՄ առաջնորդների հանդիպման օրակարգի ամենաքննարկուած հարցերից մէկը Հայաստանի իրավիճակն է այն բանից յետոյ, երբ Ադրբեջանը վերահսկողութիւն է հաստատել Լեռնային Ղարաբաղի վրայ,- գրում է «EURACTIV»-ը:*

*«Միջազգային մամուլը կենտրոնացել է Ադրբեջանի առաջնորդ Իլհամ Ալիեւի վրայ, որն արհամարհել է Ֆրանսիայի, Գերմանիայի եւ Հայաստանի ղեկավարների հետ Եւրոխորհրդի նախագահ Շառլ Միշէլի կողմից կազմակերպուած գագաթնաժողովի շրջանակներում անցկացուած հնգակողմ բանակցութիւնները:*

*Նման արհամարհանքը շփոթեցնում է տէրերին: Բայց Ալիեւը ԵՄ-ի սիրելի բռնապետն է: Այն բանից յետոյ, երբ Ռուսաստանը յարձակուեց Ուկրաինայի վրայ, ադրբեջանական գազը արժէքաւոր դարձաւ, քանի որ ռուսական մատակարարումները կրճատուեցին:*

*Ալիեւը Ղարաբաղն ընկալում էր որպէս հասուն միրգ, քանի որ կարող էր դա անել: Նա նաեւ կարող է յայտարարել, որ էթնիկ զտում չկայ. 120 հազար բնակիչ գնացել է Հայաստանում ապաստան գտնելու ոչ թէ այն պատճառով, որ Ալիեւի բանակը վտարել է նրանց, այլ այն պատճառով, որ վախենում էին, որ դա տեղի կունենայ: ՄԱԿ-ի տուեալներով, Ղարաբաղում քաղաքացիական ենթակառուցուածքներին, ինչպիսիք են հիւանդանոցները, դպրոցներն ու բնակելի շէնքերը, ինչպէս նաեւ մշակութային եւ կրօնական օբիեկտները, վնաս չի հասցուել:*

*Այնպէս որ, ամէն բան կարգին է, ԵՄ-ի սիրելի բռնապետը կատարեալ պատերազմ մղեց՝ առանց զոհերի, աւերածութիւնների, պատերազմական յանցագործութիւնների: Աւելին, միջազգային իրաւունքի համաձայն, Լեռնային Ղարաբաղը Ադրբեջանի տարածքն է, ուստի կարելի է պնդել, որ վաղ թէ ուշ դա պէտք է տեղի ունենար:*

*Թերեւս, Ալիեւին դա յաջողուեց, քանի որ Եւրոպան մոռացել է, թէ ինչպիսին էր իրադրութիւնը 1938 թուականին Միւնխէնում:*

*Բռնապետին (այս դէպքում՝ Հիտլերին) հանգստացնելը 1938 թուականին Ֆրանսիայի, Մեծ Բրիտանիայի, ֆաշիստական Իտալիայի եւ նացիստական Գերմանիայի միջեւ կնքուած համաձայնագրի հիմքն էր: Ըստ էութեան, այն նախատեսում էր Գերմանիայի կողմից Չեխոսլովակիայի մի մասի միացումը, որը կոչւում է Սուդետ, որտեղ ապրում էր աւելի քան երեք միլիոն մարդ, հիմնականում էթնիկ գերմանացիներ: Հիտլերին հանգստացնելու համար նրան «այն ինչ ուզում է» տալը, իհարկէ, ամօթալի եւ սխալ քայլ էր:*

*Ալիեւին կասկածում են նոր պատերազմի նախապատրաստման մէջ, որի նպատակն է ցամաքային միջանցք ստեղծել Նախիջեւանի՝ ադրբեջանական անկլաւի, եւ մայրցամաքային Ադրբեջանի միջեւ՝ Հայաստանի տարածքը զաւթելու միջոցով:*

*Եւ նա ունի Թուրքիայի աջակցութիւնը, որը վեհութեան մոլուցքով երազում է աւելի լայն թուրքական միջանցքի մասին՝ Անատոլիայից մինչեւ Չինաստանի ույղուրները: Միակ հողատարածքը, որը բացակայում է այս գլուխկոտրուկը լուծելու համար, Հայաստանի տարածքն է:*

*Ալիեւը գիտէր, որ իր վրայ ճնշում է գործադրուելու Գրանադայում, երբ հնգակողմ բանակցութիւններում ինքը լինելու է չորսի դէմ, ուստի մերժել է հրաւէրը: Որպէս պատրուակ՝ նա օգտագործել է ֆրանսիացի պաշտօնեաների «հայամէտ յայտարարութիւնները» եւ Երեւանին զինտեխնիկա մատակարարելու Ֆրանսիայի ենթադրեալ որոշումը:*

*Ֆրանսիայի արտաքին գործերի նախարար Քեթրին Կոլոնան առաջին արեւմըտեան պաշտօնեան էր, որն այցելեց Երեւան Ղարաբաղի անկումից յետոյ: Բայց նա չի յայտարարել Հայաստանին ֆրանսիական զէնք մատակարարելու որոշման մասին: «Ֆրանսիան համաձայնել է Հայաստանի հետ կնքել ապագայ պայմանագրեր, որոնք թոյլ կը տան ռազմական տեխնիկա մատակարարել Հայաստանին, որպէսզի նա կարողանայ ապահովել իր պաշտպանութիւնը»:*

*Ապագայ պայմանագրերի կընքման «համաձայնութիւնը» չի նշանակում, որ ռազմական մատակարարումները շուտով կը սկսեն: Իսկ Ֆրանսիան ուղարկելու շատ բան չունի, քանի որ Ուկրաինա ուղարկւող մատակարարումները սպառել են պաշարները:*

*Իրական ենթատեքստը հետեւեալն է. Ֆրանսիայում ապրում է կէս միլիոն էթնիկ հայ, եւ Կոլոնան պէտք է այցելէր Երեւան եւ ասէր մի բան, որը գեղեցիկ եւ տեղին կը հնչէր: Ալիեւը դա գիտի, բայց պատրուակը շատ լաւն էր հրաժարուելու համար:*

*ԵՄ-ն մեծ սխալ թոյլ տուեց՝ չհրաւիրելով Թուրքիայի նախագահ Ռեջեփ Թայիփ Էրդողանին Գրանադայում կայանալիք հնգակողմ միջնորդական բանակցութիւններին: Թուրքիայի նախագահը տարածաշրջանում խոշոր խաղացող է եւ Ադրբեջանի ուժեղ կողմնակիցը, եւ նա չպէտք է բացակայի նման բանակցութիւններից:*

*Եթէ ակնկալւում էր, որ Գրանադայի հանդիպումը կարեւոր իրադարձութիւն կը դառնայ, ապա դա, իսկապէս, այդպիսին կը դառնայ ձախողուած եւրոպական քաղաքականութեան տեսանկիւնից:*

*Հանդիպումը հաւանաբար կը խրախուսի Ալիեւին եւ Էրդողանին առաջ գնալ եւ խլել այն, ինչ ուզում են Հայաստանից: Հայերը կարող են փորձել կռուել, սակայն, հաւանաբար, աւելի լաւ է յանձնուեն: Կարծես, ոչ ոք իսկապէս պատրաստ չէ օգնել նրանց»:*

**«Ankakh.com»**



«Reuters».

# Ինչպէս ՀԱՄԱՍ-ը յիմարացրեց Իսրայէլին

*Վերջին յարձակումը 1973 թւականի պատերազմից ի վեր Իսրայէլի պաշտպանութեան ամենալուրջ ձախողումն է, գրում է «Reuters»-ը:*

*Մինչ Իսրայէլը համոզւած էր, որ պատերազմից յոգնած ՀԱՄԱՍ-ին զսպում է՝ տնտեսական խթաններ տրամադրելով Գազայի հատւածի աշխատակիցներին, խմբաւորման զինեալները մարզւել եւ նախապատրաստւել են, յաճախ նաեւ բոլորի աչքի առջեւ, ասել է ՀԱՄԱՍ-ին մօտ կանգնած աղբիւրը:*

*Այս աղբիւրը բազմաթիւ մանրամասներ է հաղորդել յարձակման եւ դրա նախապատրաստման մասին: Իսրայէլական անվտանգութեան երեք աղբիւրներ, որոնք, ինչպէս միւսները, ցանկացել են անյայտ մնալ, նոյնպէս տեղեկատւութիւն են յայտնել այս մասին:*

*«ՀԱՄԱՍ-ը Իսրայէլի մօտ տպաւորութիւն է ստեղծել, թէ պատրաստ չէ կռւել»,- ասել է ՀԱՄԱՍ-ին մօտ կանգնած աղբիւրը՝ նկարագրելով 50 տարի առաջ Եոմ Կիպուրի պատերազմից յետոյ ամենաապշեցուցիչ յարձակման պլանները:*

*«Վերջին ամիսներին ՀԱՄԱՍ-ը օգտագործել է աննախադէպ հետախուզական մարտավարութիւն Իսրայէլին մոլորեցնելու համար՝ հասարակութեան մօտ տպաւորութիւն թողնելով, որ չի ցանկանում կռւի կամ առճակատման մէջ մտնել Իսրայէլի հետ՝ նախապատրաստւելով այս զանգւածային գործողութեանը»,- ասել է աղբիւրը:*

*Իսրայէլը խոստովանում է, որ յարձակումն իրեն յանկարծակիի է բերել: ՀԱՄԱՍ-ի զինեալները ներխուժել են Իսրայէլական քաղաքներ՝ սպանելով 700 իսրայէլցիների եւ առեւանգելով տասնեակների: «Սա մեր 9/11-ն է»,- ասել է Իսրայէլի պաշտպանութեան բանակի ներկայացուցիչ մայոր Նիր Դինարը: «Նրանք մեզ զարմացրեցին եւ արագ յարձակւեցին տարբեր վայրերից՝ ե՛ւ օդից, ե՛ւ ցամաքից, ե՛ւ ծովից»:*

*Լիբանանում ՀԱՄԱՍ-ի խօսնակ Ուսամա Համդանը «Reuters»-ին ասել է, որ յարձակումը ցոյց է տւել, որ պաղեստինցիները կամք ունեն հասնելու իրենց նպատակներին «անկախ Իսրայէլի ռազմական հզօրութիւնից եւ հնարաւորութիւններից»:*

*Այդ նախապատրաստման ամենավառ տարրերից մէկը Գազայի հատւածում Իսրայէլական բնակավայրի մակետի կառուցումն էր, որտեղ նրանք մշակում էին դեսանտային ռազմական ուժեր իջեցնելու պլաններ եւ մարզւում այն գրոհելու համար, ասել է ՀԱՄԱՍ-ին մօտ կանգնած աղբիւրը՝ յաւելելով, որ իրենք նոյնիսկ տեսանկարահանել են զօրավարժութիւնները: «Իսրայէլը, իհարկէ, տեսել է նրանց, բայց նրանք համոզւած էին, որ ՀԱՄԱՍ-ը շահագրգռւած չէ առճակատմամբ»,- ասել է աղբիւրը:*

*Մինչդեռ ՀԱՄԱՍ-ը փորձում էր համոզել Իսրայէլին, որ ինքն աւելի շատ մտահոգւած է ապահովելով, որ Գազայում աշխատողները հասանելիութիւն ունենան աշխատատեղերին արտասահմանում եւ շահագրգռւած չէն նոր պատերազմ սկսելով: «ՀԱՄԱՍ-ին յաջողւել է տպաւորութիւն ստեղծել, որ պատրաստ չէ Իսրայէլի դէմ ռազմական արկածախնդրութեան»,- ասել է աղբիւրը:*

*2021 թւականին ՀԱՄԱՍ-ի հետ պատերազմից ի վեր Իսրայէլը ձգտել է ապահովել Գազայում տնտեսական կայունութեան հիմնական մակարդակը՝ առաջարկելով խրախուսումներ, ներառեալ Գազայի բնակիչներին Իսրայէլում կամ Յորդանան գետի Արեւմըտեան ափին աշխատելու թոյլտւութիւնները, որտեղ շինարարութեան, գիւղատընտեսութեան կամ ծառայութիւնների ոլորտում աշխատավարձերը 10 անգամ աւելի բարձր են, քան Գազայի հատւածում:*

*«Մենք հաւատում էինք, որ այն փաստը, որ նրանք գալիս են աշխատանքի եւ գումար են բերում Գազա, որոշակի հանգստութիւն կը ստեղծի: Մենք սխալւեցինք»,- ասել է Իսրայէլական բանակի մէկ այլ պաշտօնեայ:*

*Իսրայէլի անվտանգութեան աղբիւրը խոստովանել է, որ Իսրայէլի անվըտանգութեան ծառայութիւնները խաբւել են ՀԱՄԱՍ-ի կողմից: «Նրանք մեզ ստիպեցին մտածել, որ իրենց գումար է պէտք»,- ասել է աղբիւրը: «Եւ նրանք ամբողջ ժամանակ մասնակցել են մարզումների, մինչեւ որ խռովութիւն են սկսել»:*

*Իր հնարքների շրջանակում ՀԱՄԱՍ-ը վերջին երկու տարիների ընթացքում ձեռնպահ է մնացել Իսրայէլի դէմ ռազմական գործողութիւններից, մինչդեռ Գազայում տեղակայւած մէկ այլ խմբաւորում, որը յայտնի է որպէս «Իսլամական ջիհադ», մի շարք յարձակումներ եւ հրթիռային յարձակումներ է իրականացրել:*

*ՀԱՄԱՍ-ի ցուցաբերած զսպւածութիւնը արժանացել է որոշ կողմնակիցների հասարակական քննադատութեանը, որը կրկին նպատակ ունէր ստեղծելու տպաւորութիւն, որ ՀԱՄԱՍ-ը տնտեսական խնդիրներ ունի, այլ ոչ թէ նոր պատերազմի է պատրաստւում, ասել է աղբիւրը:*




*Յորդանան գետի Արեւմտեան ափում, որը վերահսկւում է Պաղեստինի նախագահ Մահմուդ Աբբասի եւ նրա «Ֆաթհ»-ի խմբաւորման կողմից, կային մարդիկ, որոնք ծաղրում էին ՀԱՄԱՍ-ին, որ նա լռել է: 2022 թւականի յունիսին հրապարակւած «Ֆաթհ»-ի յայտարարութիւններից մէկում խմբաւորումը մեղադրում էր ՀԱՄԱՍ-ի առաջնորդներին արաբական մայրաքաղաքներ փախչելու մէջ՝ ապրելու «շքեղ հիւրանոցներում եւ վիլլաներում»՝ իրենց ժողովրդին թողնելով Գազայում աղքատութեան մէջ:*

*Իսրայէլի անվտանգութեան երկրորդ աղբիւրն ասել է, որ եղել է մի ժամանակաշրջան, երբ Իսրայէլը կարծում էր, որ Գազայի շարժման առաջնորդ Եահիա Ալ-Սինւարը մտահոգւած է Գազայի հատւածի կառավարմամբ, ոչ թէ հրեաների սպանութեամբ: Միեւնոյն ժամանակ, Իսրայէլը շեղել է իր ուշադրութիւնը ՀԱՄԱՍ-ից, քանի որ նա ձգտում էր համաձայնութեան գալ Սաուդական Արաբիայի հետ յարաբերութիւնների կարգաւորման համար, յաւելել է նա:*



*Ըստ ՀԱՄԱՍ-ին մօտ կանգնած աղբիւրի, պլանի կարեւոր մասն էր արտահոսքի կանխումը:*

*ՀԱՄԱՍ-ի շատ առաջնորդներ տեղեակ չէն եղել ծրագրերի մասին, իսկ վարժանքների ժամանակ յարձակմանը մասնակցած 1000 մարտիկները տեղեակ չէն եղել զօրավարժութիւնների ստոյգ նպատակի մասին, յաւելել է աղբիւրը:*

*Երբ օրը եկաւ, գործողութիւնը բաժանւեց չորս մասի, ասել է ՀԱՄԱՍ-ի աղբիւրը՝ նկարագրելով տարբեր տարրերը:*

*Առաջին քայլը Գազայի հատւածից 3000 հրթիռների արձակումն էր, որը համընկել է զինեալների ներխուժման հետ, որոնք սահմանն անցել են դելտապլաններով, ասում է աղբիւրը:*

*Հէնց որ պաղեստինցի դեսանդայինները դելտապլաններով յայտնւել են գետնին, նրանք զբաղեցրել են տարածքը, որպէսզի էլիտար հրամանատարական ստորաբաժանումը կարողանայ գրոհել ամրացւած էլեկտրոնային եւ ցեմենտի պատը, որը բաժանում է Գազայի հատւածը բնակավայրերից եւ կառուցւել է Իսրայէլի կողմից՝ ներթափանցումը կանխելու համար:*

*Գրոհայինները պայթուցիկներ են օգտագործել՝ պատնէշները ճեղքելու համար, իսկ յետոյ մոտոցիկլետներով անցել տարածքը: Բուլդոզերներն ընդլայնել են անցքերը, եւ աւելի շատ զինեալներ են մտել քառանիւ մեքենաներով:*



**(Շար. 6-րդ էջում)**

# Հայաստանի շուրջ առկայ զարգացումներում ամերիկեան դիրքորոշման շուրջ

*Հայաստանի Հանրապետութեան եւ Ամերիկայի Միացեալ Նահանգների միջպետական յարաբերութիւնների էութեան վրայ մեծ ազդեցութիւն ունի ոչ միայն ԱՄՆ-ի որպէս համաշխարհային գերտէրութեան բնոյթը, Հայաստանի՝ աւանդաբար ռուսական ազդեցութեան գօտում գտնուելու փաստը, այլ նաեւ հայ-ամերիկեան յարաբերութիւնների պատմական հոլովոյթը՝ սկսած դեռեւս 19-րդ դարավերջից, երբ համիդեան ջարդերից մազապուրծ՝ հայերը սկսեցին ապաստան եւ փկութիւն գտնել Միացեալ Նահանգներում: Այնուհետեւ՝ Հայոց Ցեղասպանութիւնից փրկուած հարիւր հազարաւոր հայերի ապաստանումը Նահանգներում, 1919 թ. Հայաստանի Հանրապետութեան եւ ԱՄՆ-ի միջեւ հաստատուած դիւանագիտական յարաբերութիւնները, դրանից աւելի վաղ՝ ամերիկահայ համայնքի կողմից հայկական շահերի պաշտպանութեան աշխատանքների սկիզբը ԱՄՆ-ում, վերջապէս ԱՄՆ 28-րդ նախագահ Վուդրօ Վիլսոնի դերակատարութիւնը հայ ժողովրդի նորագոյն պատմութեան մէջ, ընդհանրապէս ամերիկահայ համայնքի ակտիւ ներկայութիւնն ու ազդեցութիւնը ԱՄՆ-ում էական ազդեցութիւն ունեն հայ-ամերիկեան եւ Հայաստան-Ամերիկա միջպետական յարաբերութիւնների ընկալման եւ դրա արդիւնքում ձեւաւորուած սպասումների վրայ:*

*Մեր նախորդ յօդուածներից մէկում անդրադարձել էինք Միացեալ Նահանգներում հայկական էթնիկ լաբբինգի սկզբնաւորման, առաջին դրսեւորումների, դրանց զարգացման փուլերի, աշխատելաոճի, քաղաքական առաջնահերթութիւնների ու գործունէութեան հիմնական ուղղութիւնների առանձնայատկութիւններին: Չկրկնելով, միայն յաւելենք, որ Ամերիկայի Հայկական Սփիւռքի քաղաքական ազդեցութեան գնահատումն ու դրա վերաբերեալ ակադեմիական աշխատանքները մշտապէս եղել են քաղաքագէտների ու միջազգային յարաբերութիւնների տեսաբանների, ինչպէս նաեւ պատմաբանների ուշադրութեան կենտրոնում: Ամերիկայի Հայկական Սփիւռքի գործունէութիւնը գնահատել են այնպիսի գիտնականներ ինչպիսիք են Սամուէլ Հանթինգթոնը, Եօսի Շէյնը, Զբիգնեւ Բժեզինսկին եւ այլք: Վերջինս օրինակ Ամերիկայում իսրայէլական եւ կուբայական լաբբիների շարքում ամենաարդիւնաւէտը դիտում էր հէնց հայկական լաբբին:*

*Այնուամենայնիւ, այս յօդուածով նպատակ ունենք ընթերցողի դատին յանձնել ոչ թէ Ամերիկայում հայկական շահերի պաշտպանութեան ներկայ հանգրուանը, այլ խթանել ընթերցողի ուշադրութիւնը հայ-ամերիկեան բազմաշերտ յարաբերութիւնների վրայ, յատկապէս միջպետական յարաբերութիւնների:*

*Խորհրդային Միութեան փլուզումից յետոյ, ԱՄՆ-ն առաջին պետութիւններից մէկն էր, որ ճանաչեց ՀՀ Անկախութիւնը 1992 թ. դեկտեմբերին, հաստատուեցին միջպետական յարաբերութիւններ, 1992 թ. փետրուարին եւ մարտին փոխանակուեցին դեսպաններ: Նոյն թուականից Հայաստանում իր գործունէութիւնը սկսեց ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալութիւնը (USAID)՝ իրականացնելով ժողովրդավարութեան խրախուսման, էներգաջրամատակարարման կարգաւորման, մարդասիրական օգնութեան, իրաւական դաշտի բարելաւման, գիւղատնտեսութեան եւ զբօսաշրջութեան աճի եւ այլ բնոյթի բազմաթիւ ծրագրեր: Հայաստանին մարդասիրական եւ տեխնիկական օգնութեան տրամադրման տեսանկիւնից ԱՄՆ-ն խոշորագոյն դոնորն է:ԱՄՆ-ն նաեւ նոյն 1992 թ. ձեւաւորուած եւ նոյնիսկ ցայսօր Ղարաբաղեան հիմնախնդրի լուծման գործում միջնորդութեան միակ բացառիկ մանդատ ունեցող կառոյցի՝ ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահ է: Համանախագահութեան հանգամանքը եւ Ղարաբաղեան հիմնախնդրի նշանակութիւնը ՀՀ-ի համար ԱՄՆ-Հայաստան յարաբերութիւններում պայմանաւորեցին յաւելեալ կարեւորութիւն: Կարելի է ասել, որ հէնց 1992 թ, էր, որ ամենաբեկումնայինն էր երկկողմ յարաբերութիւններում: Մասնաւորապէս, 1992 թ. օգոստոսի 12-ին ԱՄՆ Կոնգրեսի կողմից ընդունուեց «Ազատութեան աջակցութեան ակտի» 907-րդ ենթաբաժինը (յայտնի որպէս 907-րդ բանաձեւ), որով արգելւում էր ամերիկեան ուղղակի ֆինանսական աջակցութիւնը Ադրբեջանին: Այն ղարաբաղեան առաջին պատերազմի հետեւանքով Ամերիկայի Հայկական Սփիւռքում ձեւաւորուած քաղաքական օրակարգ էր, որն իրացուեց Ամերիկայի հայ համայնքի եւ դրա լաբբիստական կառոյցների գործունէութեամբ: 2002 թ. ԱՄՆ Կոնգրեսը նախագահին հնարաւորութիւն տուեց ի թիւս այլնի շրջանցելու 907-րդ բանաձեւը՝ եթէ դա պայմանաւորուած է ԱՄՆ անվտանգային հետաքրքրութիւններով: Դրանից յետոյ ԱՄՆ բոլոր նախագահները, մէկամեայ իրաւական ուժ ունեցող ակտով կասեցնում են դրա կիրառումը, ինչի դէմ Հայ Դատի Ամերիկայի յանձնախումբը երկար տարիներ մեծ ջանքեր է գործադրում: Հետաքրքիր է, որ ԱՄՆ նախագահը, 2024 թ. համար դեռեւս չի ստորագրել 907-րդ բանաձեւի կասեցումն ապահովող համապատասխան ակտը, ինչի մասին վերջերս ԱՄՆ Կոնգրեսում տեղի ունեցած լսումների ժամանակ ակնարկեց նաեւ ԱՄՆ պետքարտուղարի Եւրոպայի եւ Եւրասիայի հարցերով օգնականի պաշտօնակատար Իւրի Քիմը:*

*Գալով ԱՄՆ-Հայաստան յարաբերութիւնների կառուցակարգային հարթութեանը՝ յաւելենք, որ ստորագրուած են շուրջ 15 երկկողմ համաձայնագրեր, մէկ արձանագրութիւն, բազմաթիւ յուշագրեր, որոնք խիստ բազմաոլորտ են եւ վերաբերում են տնտեսութեան ու հասարակական կեանքի տարբեր ոլորտներին:*

*Ասածը փոքր մասն է հայ-ամերիկեան առնչութիւնների հարուստ պատմութիւնից, ինչը հայ ժողովրդի եւ քաղաքական եւ հասարակական լայն շերտերի մօտ ձեւաւորում է Վաշինգտոնից քաղաքական, անվտանգային, տնտեսական օժանդակութեան սպասումներ, ինչը յաճախ չի արդարացւում, ոչ միայն, նրա համար, որ ԱՄՆ-ն անպայմանօրէն մտադիր է չօգնել Հայաստանին, այլ նրա համար, որ ամերիկեան քաղաքական շահն ու հայ ժողովրդի շահը միշտ չէ, որ զուգամիտում են:*

*ԱՄՆ-ն խիստ բազմաշերտ պետութիւն է՝ հիմնուած պետական իշխանութեան թեւերի ու ոլորտային գերատեսչութիւնների միմիանց հաւասարակշռման ու հակակշռման վրայ, որոնցից իւրաքանչիւրն ունի իր առանձնայատկութիւններն ու առաջնահերթութիւնները: Օրինակ, ընդունուած է կարծել, որ ամերիկեան վարչակարգում Հայաստանի հետ յարաբերութիւնների պլանաւորմամբ առաւելապէս զբաղւում է պետդեպարտամենտը, իսկ Ադրբեջանի հետ յարաբերութիւններով՝ պաշտպանութեան դեպարտամենտը, եւ ներամերիկեան քաղաքական գործընթացների տրամաբանութիւնից է նաեւ կախուած, թէ որ ոլորտի թելադրած ուղենիշերով կը զարգանան ԱՄՆ յարաբերութիւնները հարաւկովկասեան երկու հակամարտ երկրների հետ: Հայաստանի հետ ամերիկեան յարաբերութիւնների տեսլականի տարբերութիւնը խիստ ընդգծուած եւ տեսանելի է յատկապէս օրէնսդիր գործադիր հակասութիւնների պարագայում:*

*Նախ՝ ինչո՞ւ է այդպէս: Որպէս կանոն պետութիւնների խորհրդարանները, որոնք օժտուած են առաջնային մանդատով, ամենաբացն են համայնքային կազմակերպութիւնների եւ էթնիկ լաբբիստական խմբերի համար եւ յատկապէս արեւմրտեան աշխարհում ազատօրէն յարաբերւում են վերջիններիս հետ ու կաշկանդուած չեն պետական քաղաքականութեան սահմանափակումներով: Բացի այդ, յատկապէս ԱՄՆ-ում քաղաքականապէս ակտիւ հայ համայնքի վստահութեանն արժանանալը կարեւոր դեր կարող է խաղալ ընտրական գործընթացներում: Սրանք պատճառներից ի հարկէ մի քանիսն են, որոնք ԱՄՆ-ում, յատկապէս Հայ Դատի Ամերիկայի յանձնախմբի ծաւալուն եւ ամենօրեայ աշխատանքի արդիւնքում յանգեցրել են նրան, որ ԱՄՆ Կոնգրեսում պարբերաբար քննարկման առարկայ են դառնում եւ օրէնսդրական տարբեր գործընթացների միջոցով առաջ են մղւում, օրինակ, Հայ Դատի Ամերիկայի յանձնախմբի հիմնական քաղաքական առաջնահերթութիւնները: Մասնաւորապէս Կոնգրեսը, դրա զոյգ պալատները, ոլորտային պատասխանատու գործիչները շատ յըստակ կամ նուազագոյնը ոչ մեզ հակառակ վերաբերմունք ունեն 907-րդ բանաձեւի պահանջների վերականգնման, Արցախին տրամադրուող ադրբեջանական ռազմական օժանդակութեան անյապաղ դադարեցման, Ադրբեջանի ռազմաքաղաքական ղեկավարութեան նկատմամբ ԱՄՆ օրէնսդրութեամբ նախատեսուած՝ «Մագնիցկու գլոբալ պատժամիջոցների կիրառման», Հայաստանին տրամադրուող ամերիկեան օժանդակութեան շեշտակի մեծացման, Հայաստանի անվտանգութեան պաշտպանութեան գործում ամերիկեան ներգրաւուածութեան, Ղարաբաղեան հակամարտութեան արդար լուծման վերաբերեալ: ԱՄՆ Կոնգրեսում գործում է 118 անձից բաղկացած հայկական հարցերով խումբը, որի 4 համանախագահներից Ֆրանկ Փալոնի ու Ադամ Շիֆի անունները Հայաստանում յայտնի են նոյնիսկ քաղաքականութեամբ չհետաքրքրուողների շրջանակում:*





*Այս ամէնը իհարկէ վիթխարի ճնշում է ԱՄՆ իշխանութեան գործադիր թեւի վրայ, որը 2019 թ. ԱՄՆ Կոնգրեսի զոյգ պալատների կողմից Հայոց Ցեղասպանութեան ճանաչումից յետոյ, ի վերջոյ 2021 թ.-ին տեղի տուեց եւ իր հերթին ճանաչեց ցեղասպանութիւնը: Այնուամենայնիւ, արցախեան հիմնախնդրի առումով կոնգրեսական եւ համայնքային ճնշումը, ոչ միայն դեռեւս չի պսակւել յաջողութեամբ, այլեւ ԱՄՆ-ն, ի թիւս մնացեալ դերակատարների, պատասխանատուութեան իր բաժինն ունի արցախեան հերթական ողբերգութիւնը չկանխելու եւ դրանով մեղսակից դառնալու մէջ:*

*Մինչ Կոնգրեսը պնդում է իր յստակ դիրքորոշումը Ադրբեջանի նկատմամբ, ԱՄՆ պետական իշխանութեան գործադիր թեւը շարունակում էր եւ շարունակում է իր երկդիմի քաղաքականութիւնը, երբ յաճախ հաւասարեցման նշան է դրւում ագրեսորի եւ ագրեսիայի զոհի միջեւ, իսկ լաւագոյն դէպքում Վաշինգտոնը բաւարարւում է Բաքւին յուած կոչերով: Երբեք յոյում չի արուել կամ նոյնիսկ չի ակնարկուել Բաքւի նկատմամբ պատժամիջոցների կիրառման հաւանականութեանը: Ամերիկեան գործադիր իշխանութիւնը լռեց շուրջ տասն ամիս շարունակւող շրջափակման ու սովի ընթացքում, խաղաղ բնակչութեանը տեղահանելու ժամանակ ու առհասարակ Արցախի էթնիկ զտման ընթացքում եւ հիմա: Աշխարհում Մարդու իրաւունքների պաշտպանութիւնը քաղաքական առաջնահերթութիւն հռչակած ԱՄՆ-ի լուռ համաձայնութեամբ նաեւ, Արցախը ենթարկուեց էթնիկ զտման:*

*Այսպիսով ակնյայտ է, որ Արցախի հայութեան իրաւունքների պաշտպանութիւնը ԱՄՆ քաղաքական առաջնահերթութիւնների մէջ չի մտնում, ինչը սակայն չի նշանակում թէ Հայաստանը կորցրել է հետաքրքրութիւնը ԱՄՆ-ի համար: Վերը յիշատակուած հանգամանքները, ինչպէս նաեւ Հայաստանի ռազմավարական դերը, բնակչութեան մի ստուար հատուածի մօտ պրօ-արեւմտեան ձգտումները եւ Ռուսաստանից հիասթափութիւնը պայմանաւորում են Հայաստանի վերաբերեալ ԱՄՆ քաղաքական ուշադրութիւնը:*

*Թէեւ մեր ժողովրդի պատմութեան հերթական ծանրագոյն հանգրուանում յաճախ արդարացի ցանկութիւն է առաջանում մեղքը բարդել նաեւ օտար ուժերի վրայ, պէտք չէ սակայն հաշւի չառնել երկու հանգամանք՝ ե՛ւ Ամերիկան, ե՛ւ Ռուսաստանը մեկնում են սեփական ազգային-պետական շահերից, որոնք կարող են չզուգամիտել մեր շահերին եւ երկրորդ՝ Հայաստանի գործող իշխանութիւնները միջազգային որեւէ գործընկերոջ շրջանում չեն ձեւաւորել այն համոզումը, որ իրենք պատրաստւում են ամէն գնով փրկել Արցախը: Ընհակառակը՝ Հայաստանի իշխանութիւնն աշխարհին ցոյց է տուել Արցախեան հիմնահարցի լուծման ամենից կարճ ճանապարհը, ինչն էլ միջազգային հանրութեանը հետաքրքրում է աւելին, քան Արցախի ժողովրդի իրաւունքների իրացումն է:*

*Ակնյայտ է, որ ԱՄՆ-ն Արցախը համարում է Ադրբեջանի մաս, դեռեւս չի պատրաստւում պատժամիջոցներ կիրառել Ալիեւի եւ նրա վարչակազմի նկատմամբ մարդու իրաւունքների զանգւածային խախտումների, պատերազմական յանցագործութիւնների եւ էթնիկ զտման ցեղասպան քաղաքականութեան համար, ինչն ուղղակիօրէն քաջալերում է Ալիեւին անպատժելիութեան գիտակցմամբ շարունակելու վայրագութիւնները: Սրան զուգահեռ մենք ունենք ԱՄՆ Կոնգրեսի տրամագծօրէն տարբերւող դիրքորոշումը, ինչի առկայութիւնն ինքնին հնարաւորութիւն է տալիս*

**(Շար. 6-րդ էջում)**

# ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Այսու մեր հաւատացեալ ժողովրդի զաւակներին յայտնում ենք, որ առաջիկայ **2023 թ., շաբաթ, հոկտեմբերի 14-ին փօնն է ՍՐԲՈՑ ԹԱՐԳՄԱՆՉԱՑ ՎԱՐԴԱՊԵՏԱՑՆ ՄԵՐՈՑ՝ ՄԵՍՐՈՊԱՅ, ԵՂԻՇԷԻ, ՄՈՎՍԻՍԻ ՔԵՐԹՈՂԱՀՕՐՆ, ԴԱՒԹԻ ԱՆՅԱՂԹ ՓԻԼԻՍՈՓԱՅԻՆ, ԳՐԻԳՈՐԻ ՆԱՐԵԿԱՑՒՈՅՆ եւ ՆԵՐՍԻՍԻ ԿԼԱՅԵՑՒՈՅՆ:** Սրբոց Թարգմանչաց փօնը համընկնում է Սասուն քաղաքամասի Սրբոց Թարգմանչաց եկեղեցու անուանակոչութեան փօնին:

Այս առիթով՝ ուրբաթ, հոկտեմբերի 13-ին, ժամը 18:00-ին, Սասուն քաղաքամասի Սրբոց Թարգմանչաց եկեղեցում տեղի է ունենալու հսկումի արարողութիւն, իսկ շաբաթ, հոկտեմբերի 14-ին, առ. ժամը 10:00-ին, մատուցուելու է ս. եւ անմահ պատարագ:

| | |
|---|---|
| **Սկիզբ ժամերգութեան** | **ժամը 9:00-ին** |
| **Սկիզբ պատարագի** | **ժամը 10:00-ին** |
| **Քարոզ** | **ժամը 11:00-ին** |

Ուստի մեր բարեպաշտ ժողովրդի զաւակներին սիրով հրաւիրում ենք, որ ներկայ գտնուեն վերոյիշեալ հոգեպարար արարողութեանց՝ լիցքաւորուելու եւ հաղորդուելու Սրբոց Թարգմանչաց խորհրդով:

**ԴԻՒԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ ԹԵՀՐԱՆԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԻ**

**Հ. Մ. «Արարատ» Կ.-ի Երէցների միութեան նախաձեռնութեամբ՝**

ՀԱՅ ՄՇԱԿՈՅԹԻ ՏՕՆԻ ԱՌԻԹՈՎ

## *Ձեռքի աշխատանքի մրցոյթ*

**ուրբաթ,13 հոկտեմբերի 2023թ. (21մեհրի1402)**
**առաւօտեան ժամը 11:00-ին, «Արարատ» մարզաւանի բացօթեայ ընթրիքների շրջափակում**

Մատակարարուելու է՝ թէյ, սուրճ, խմորեղէն եւ ճաշ

**Մասնակցելու առիթ է փրւում շնորհալի մանուկներին, պատանիներին եւ մինչեւ 35 տարեկան երիտասարդ-երիտասարդուհիներին**

Շտապէք մասնակցելու Ձեր ձեռքի աշխատանքներով՝
ձեռագործ, ծաղկակար, ուլունքակար, նկարչութիւն, քանդակագործութիւն, փայտով, մոմով , ապակու վրայ (վիտրայ) աշխատանքներ եւ այլն

**Լաւագոյն աշխատանք ներկայացնողը կարժանանայ լաւագոյն մրցանակի**

**Մասնակցողներից խնդրում ենք, նոյն օրը՝ ուրբաթ, հոկտեմբերի 13-ի, առաւօտեան ժամը 9:00-ին իրենց աշխատանքներով ներկայ գտնուեն «Արարատ» մարզաւանի բացօթեայ ընթրիքների շրջափակում:**

*Մուտքն ազատ է*

**www.araratorg.org**
**telegram.me/araratorg**
**instagram/Ararat_organization**

**Հ. Մ. «ԱՐԱՐԱՏ» Կ.**


مسافربری بین المللی

www.didarseir.ir
Email:info@didarseir.ir



**دیدار سیر گیتی**
**DIDAR SEIR–E–GITY**
Միջազգային ուղեւորափոխադրումների 27 տարուայ փորձով այն պատրաստ է սպասարկել Ձեր հայրենակիցներին
Ամենօրեայ ուղեւորութիւն VIP հանրակառքով

**دفتر مرکزی**
تهران،میدان آزادی،پایانه غرب،شرکت مسافربری بین المللی دیدار سیر گیتی
تلفن 021-44659543 • 021-44693051-4 • 021-44663893-4 •

**نمایندگی نارمک**
چهل و شش متری غربی نارمک،انتهای خیابان گلستان،خیابان گلشن دوست(مسیل باختر)،نبش خیابان طوروسیان(84)،پلاک 43
تلفن 021-77281287 • 021-77281288 • 021-77821769 • 021-77259537 • 09366955599 •
واتساپ
اینستاگرام @Didarseiregity

**دفتر ایروان**
خیابان نالباندیان - شماره 28
تلفن +374-91595521 +374-94371237

Մէկ տեղանոց (VIP)
Աթոռ մահճակալ
Մոնիտորով
Յագեցած է WiFi-ով





## ԿԱՐԻՔ ՈՒՆԵՆՔ

Մի հեղինակաւոր արդիւնաբերական ընկերութիւն կարիք ունի.

- **Հաշուապահութեան մասնագէտ**
- **Քիմիայի մասնագէտ**
- **Քարտուղարի,** որը ծանօթ լինի վարչական աշխատանքներին

## آگهی استخدام

یک شرکت معتبر تولیدی به افراد ذیل نیازمند است.

– **کارشناس حسابداری**
– **کارشناس شیمی**
– **منشی جهت امور اداری**

**ارسال رزومه به واتس‌آپ: ۰۹۱۹۵۸۵۲۴۷۷**



**Արդէն լոյս է տեսել եւ վաճառւում է**

## «ՄԻ ՆԱՒԱԲԵՌ ՄԵԽԱԿ ՀՐԱՆՏ ԴԻՆՔԻ ՀԱՄԱՐ»

**Գիրքը՝ պարսկերէն լեզւով**




Հեղինակ՝ Աննա Դաւթեան
Թարգմանիչ՝ Անի Յովսէփեան
(Թեհրան, 2023 թ., «Նարիման» հրատարակչութիւն)

یک کشتی پر از میخک برای هراند دینک
(نمایشنامه)
نویسنده: آنا داوتیان (نویسنده معاصر ارمنستانی)
مترجم: آنی هُـوسپیان
ناشر: نشر نـریـمـان

**Այս բացառիկ հրատարակութիւնը կարող էք ձեռք բերել հետեւեալ հրատարակչական կենտրոններում՝**

خرید آنلاین از سایت های:
30 بوک — کتاب نهنگ
ایران کتاب — کتاب وب

شهر کتاب مرکزی — ثالث — نشر چشمه



## آگهی استخدام

**نمایندگی خودرو های (هیوندای و کیا)**
**واقع در تهران (منطقه ونک)**

| سمت | شرایط احراز شغل |
|---|---|
| حسابدار | لیسانس حسابداری- آشنایی به کامپیوتر -با سابقه کار آشنا به تمام قوانین حسابداری |
| کارمند حسابداری | دیپلم حسابداری و بالاتر با سابقه کار |
| مهندس صنایع | لیسانس صنایع |
| مهندس مکانیک | لیسانس و فوق‌لیسانس |
| مهندس برق خودرو | لیسانس و فوق‌لیسانس |

- **آدرس ایمیل: svpco@yahoo.com**
- **تلفن ثابت: ۸-۸۸۶۰۸۷۲۷-۰۲۱**
- **تلفن واتساپ: ۲۲۷۹۲۹۶-۰۹۳۵**
- **ساعت تماس: از ۸ صبح تا ۶ عصر**



**سفر دوستان قرن**
SAFAR DOUSTAN GHARN
TOUR & TRAVEL AGENCY
Safar Doustan Gharn Tour & Travel Co. Ltd

هواپیمایی قشم QeshmAir

**نمایندگی رسمی هواپیمایی قشم ایر**

**شرکت خدمات مسافرتی و جهانگردی سفردوستان قرن**

**Թռիչքներ է իրականացնում երկուշաբթի եւ հինգշաբթի օրերը՝ դէպի Հայաստան եւ վերադարձ**

## ԹԵՀՐԱՆ - ԵՐԵՒԱՆ - ԹԵՀՐԱՆ

**تهران، خیابان شهید بهشتی، بین بزرگراه مدرس و قائم مقام، پلاک ۲۷۱، طبقه همکف**

**WWW.SAFARDOUSTAN.COM**

**۸۸۵۱۴۰۵۰**




### Ինչպէս...

(Շար. 4-րդ էջից)

*Կոմանդոների ստորաբաժանումը յարձակուել է Գազայի հարաւում գտնուող իսրայէլական բանակի շտաբի վրայ եւ արգելափակել հաղորդակցութիւնը՝ թոյլ չտալով անձնակազմին զանգահարել հրամանատարներին կամ միմեանց, ասել է աղբիւրը:*

*Վերջնական մասը ներառում էր պատանդների տեղափոխումը Գազայի հատուած, ինչը հիմնականում հնարաւոր էր եղել յարձակման վաղ փուլերում, ասել է ՀԱՄԱՍ-ին մօտ կանգնած աղբիւրը:*

*Իսրայէլական անվտանգութեան աղբիւրը յայտնել է, որ Իսրայէլական զօրքերը հարաւում՝ Գազայի հատուածի մօտ, ամբողջ ծաւալով զինուած չեն եղել, քանի որ զօրքերի մի մասը տեղակայուել է Արեւմտեան ափին՝ պաշտպանելու Իսրայէլցի վերաբնակիչներին նրանց եւ պաղեստինցի գրոհայինների միջեւ բռնութեան աճից յետոյ: «Նրանք (ՀԱՄԱՍ) օգտուեցին դրանից»,- ասել է աղբիւրը:*

*Վարչապետ Բենիամին Նաթանիահուի ազգային անվտանգութեան նախկին խորհրդական, պաշտօնաթող գեներալ Եակով Ամիդրորը լրագրողներին ասել է, որ յարձակումը «հարաւում հետախուզական համակարգի եւ ռազմական ապարատի հսկայական ձախողումն է»:*

*Ամիդրորը՝ Ազգային անվտանգութեան խորհրդի նախագահ 2011 թուականի ապրիլից մինչեւ 2013 թուականի նոյեմբերը եւ այժմ Երուսաղէմի Ռազմավարութեան եւ անվտանգութեան ինստիտուտի աւագ գիտաշխատող, ասել է, որ Իսրայէլի որոշ դաշնակիցներ ասում են, որ ՀԱՄԱՍ-ը ստանձնել է «մեծ պատասխանատուութիւն»: «Մենք յիմարաբար սկսեցինք հաւատալ, որ դա ճիշտ է», - ասաց նա: «Ուրեմն մենք սխալուեցինք: Մենք չենք պատրաստւում կրկին կրկնել այս սխալը եւ կամաց-կամաց կը կործանենք ՀԱՄԱՍ-ը»:*

### Հայաստանի...

(Շար. 5-րդ էջից)

*ԱՄՆ գործադիր իշխանութեանը իր համար յարմար պահին խստացնելու Ադրբեջանի նկատմամբ դիրքորոշումը:*

*Այս առումով Ամերիկայի հայկական Սփիւռքը անելիք ունի, ամերիկեան տարածաշրջանային քաղաքականութիւնը չի կարող մշտապէս նոյն ուղենիշերն ունենալ եւ անհրաժեշտ է աշխատել, որ այդ ուղենիշերի փոփոխութեան ժամանակ քաղաքական հաշւարկներն արւեն յօգուտ մեզ: Հետեւապէս պէտք է շարունակաբար մեծացնել կոնգրեսական ու համայնքային ճնշումը եւ իբրեւ ամենաառաջին քայլ, կանխել նախագահ Բայդէնի կողմից 907-րդ բանաձեւի կիրառման պահանջներից հրաժարումը՝ այն հիմնաւորմամբ, որ Ադրբեջանը, ի հակառակ ԱՄՆ պաշտօնական դիրքորոշման, Արցախի խաղաղ բնակչութեան նկատմամբ կիրառել է ագրեսիա: Թերեւս, եթէ չգտնուէինք ներկայ հանգրւանում եւ ԱՄՆ նախագահին կ| ստորագրած չլինէր 907-րդ բանաձեւի չեղարկումը, դա համարւէր կարեւորագոյն յաղթանակ Հայ Դատի հետապնդած նպատակների համատեքստում, բայց ամերիկեան քաղաքականութեան վերջին ձախողման եւ Արցախի հայութեան տեղահանման համատեքստում, այդ «յաղթանակի» բովանդակութիւնն ամբողջութեամբ խեղաթիւրուած է: Ամէն դէպքում, քանի դեռ նախագահ Բայդէնը չի ստորագրել 907-րդ բանաձեւի պահանջների չեղարկումը, ինչը ըստ կարգի պէտք է անէր ամիսներ առաջ, ապա ներկայումս, առաւել քան երբեւէ, պէտք է անել ամէն ինչ դա թոյլ չտալու համար:*

**ԳԷՈՐԳ ՂՈՒԿԱՍԵԱՆ**
**ՀՅԴ Բիւրոյի Հայ Դատի եւ Կենտրոնական գրասենեակի յատուկ ծրագրերի պատասխանատու**
**horizonweekly.ca**

## ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏ

Խոր վշտով համակուած յայտնում ենք, որ մեր շատ սիրելի եւ թանկագին՝



### ՍՐԲՈՒՀԻ ՂԱՐԱԽԱՆԵԱՆԻ (ԽԱՉԱՏՐԵԱՆ)

ցաւալի մահուան քառասնօրեակի առթիւ՝ ուրբաթ, հոկտեմբերի 13-ին, Ս. Սարգիս եկեղեցում, ս. պատարագից յետոյ կը կատարուի՝

**ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏ**

Ցաւակցութիւնները՝ եկեղեցում:

**ՍԳԱԿԻՐՆԵՐ՝**

Արաքս եւ Նեւիլ Բարսեղեաններ՝ դուստրը եւ փեսան՝ ընտանեօք:
Քլար եւ Ռոբերտ Դաւթեաններ՝ դուստրը եւ փեսան՝ ընտանեօք:
Ժանետ եւ Բարգէն Ղազարեաններ՝ դուստրը եւ փեսան՝ ընտանեօք:
Ալիս եւ Վրէժ Ներսիսեաններ՝ դուստրը եւ փեսան:
Հռիփսիկ Խաչատրեան՝ եղբօր կինը:
Մերի եւ Աշոտ Յովհաննիսեաններ՝ քոյրը եւ իր ամուսինը՝ ընտանեօք:
Խաչատրեան եւ Ղարախանեան ընտանիքներ՝ հարազատները:

**ՆՈՒԻՐԱՏՈՒՈՒԹԻՒՆ**

Հանգուցեալի յիշատակին կատարուել են հետեւեալ նուիրատուութիւնները.
1-Ս. Գէորգ եկեղեցու շրջափակում ապրող տարեցներին՝ 40.000.000 ռ.
2-Մարմնա-մտային խանգարումներով հայ երեխաներին օժանդակող «Ակունք» կենտրոնին՝ 40.000.000 ռ.
Գումարն ստանալ «Ալիք»-ից:

## ՑԱՒԱԿՑԱԿԱՆ

Այսու իմ խորին ցաւակցութիւնն եմ յայտնում՝ դոկտ. Արտեմ եւ Ալին Շահբաբեաններին ու միւս բոլոր հարազատներին, իրենց կրած ծանր եւ անփոխարինելի կորստի՝

### ԱԼԲԵՐՏ ՂԱՐԻԲԵԱՆԻ

ցաւալի մահուան առթիւ:

**ԱՐԳԻՇՏԻ ԹՈՎՄԱՍԵԱՆ**

## ՑԱՒԱԿՑԱԿԱՆ

Այսու իմ խորին ցաւակցութիւնն եմ յայտնում՝ դոկտ. Արտեմ եւ Ալին Շահբաբեաններին ու միւս բոլոր հարազատներին, իրենց կրած ծանր եւ անփոխարինելի կորստի՝

### ԱԼԲԵՐՏ ՂԱՐԻԲԵԱՆԻ

ցաւալի մահուան առթիւ:

**ՌԵԶԱ ՄՈՀԱՄՄԱԴԽԱՆԼՈՒ**

ԱԼԻՔ-ի Internet-ային էջն է՝ www.alikonline.ir

## ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏ

Խոր վշտով համակուած յայտնում ենք, որ մեր շատ սիրելի եւ թանկագին՝



### ՍՄԲԱՏ ՂԱՐԱԲԷԳԵԱՆԻ

ցաւալի մահուան քառասնօրեակի առթիւ՝ ուրբաթ, հոկտեմբերի 13-ին, Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցում, ս. պատարագից յետոյ կը կատարուի՝

**ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏ**

Ցաւակցութիւնները՝ եկեղեցում:

**ՍԳԱԿԻՐՆԵՐ՝**

Ֆլոր Գրիգորեան՝ այրին:
Էդմոնդ եւ Մեղեդի Ղարաբէգեաններ՝ որդին եւ հարսը՝ ընտանեօք:
Էդիթ եւ Ռուբիկ Ղազարեաններ՝ դուստրը եւ փեսան՝ ընտանեօք:
Արփիկ Ղարաբէգեան՝ եղբօր կինը՝ ընտանեօք:
Լուսիկ Ղարաբէգեան՝ քոյրը՝ ընտանեօք:
Սոֆիկ Ղարաբէգեան՝ քոյրը՝ ընտանեօք:
Շուշիկ Ղարաբէգեան՝ քոյրը՝ ընտանեօք:
Ղարաբէգեան, Գրիգորեան, Շահբազեան եւ Այվազեան ընտանիքներ՝ հարազատները:

## ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏ

Խոր վշտով համակուած յայտնում ենք, որ մեր շատ սիրելի եւ թանկագին՝



### ՍԱՐՕ ԾԱՌՈՒԿԵԱՆԻ

ցաւալի մահուան առաջին տարելիցի առթիւ՝ ուրբաթ, հոկտեմբերի 13-ին, Ս. Թարգմանչաց եկեղեցում, ս. պատարագից յետոյ կը կատարուի՝

**ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏ**

Ցաւակցութիւնները՝ եկեղեցում:

**ՍԳԱԿԻՐՆԵՐ՝**

Քրիստինէ Յովսէփեան՝ այրին:
Սեւան Ծառուկեան՝ որդին:
Սեւադա եւ Այիդա Ծառուկեաններ՝ որդին եւ հարսը:
Սարմէն Ծառուկեան՝ որդին:
Սասուն Ծառուկեան՝ որդին:
Ծառուկեան եւ Յովսէփեան ընտանիքներ:
Հանգուցեալի ընկերները եւ բարեկամները:

**ՆՈՒԻՐԱՏՈՒՈՒԹԻՒՆ**

Ծառուկեան ընտանիքը սիրելի եւ թանկագին Սարօ Ծառուկեանի յիշատակին նուիրատուութիւններ է կատարել Թ. Հ. Թ. Արցախահայութեան օժանդակող յանձնախմբին եւ «Ալիք» հաստատութեան:

## ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏ

Խոր վշտով համակուած յայտնում ենք, որ մեր շատ սիրելի եւ թանկագին՝



### ԱՒԵՏԻՍ (ԱՒՕ) ԴԱՒԹԵԱՆԻ

ցաւալի մահուան քառասնօրեակի առթիւ՝ ուրբաթ, հոկտեմբերի 13-ին, Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցում, ս. պատարագից յետոյ կը կատարուի՝

**ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏ**

Ցաւակցութիւնները՝ եկեղեցում եւ Հ. Մ. Մ. «Նայիրի» միութեան «Արցախ» սրահում:

**ՍԳԱԿԻՐՆԵՐ՝**

Անուշ Դաւթեան (Մինասեան)՝ այրին:
Քրիստինէ եւ Արշաւիր Աղասարեաններ՝ քոյրը եւ իր ամուսինը՝ ընտանեօք:
Դաւթեան, Խուդավերդեան, Մինասեան, Աղասարեան, Մարտիրոսեան, Զարգարեան, Մուսախանեան, Աբրահամեան, Աղաջանեան, Յարութիւնեան, Վարդանեան, Հայրապետեան, Յակոբեան, Սահակեան, Մատթէոսեան եւ Մանուկեան ընտանիքներ՝ հարազատները:

## ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏ

Խոր վշտով համակուած յայտնում ենք, որ մեր շատ սիրելի եւ թանկագին՝



### ՍԱՄՈՒԷԼ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆԻ

ցաւալի մահուան առաջին տարելիցի առթիւ՝ ուրբաթ, հոկտեմբերի 13-ին, Ս. Սարգիս եկեղեցում, ս. պատարագից յետոյ կը կատարուի՝

**ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏ**

Ցաւակցութիւնները՝ եկեղեցում:

**ՍԳԱԿԻՐՆԵՐ՝**

Աղիկ, Վահիկ եւ Թենի Դաւթեաններ՝ դուստրը, փեսան եւ թոռը:
Հերմինէ, Արմէն, Սարմէն եւ Սարինէ Քեշիշեաններ՝ դուստրը, փեսան եւ թոռները:
Վահէ, Թալին եւ Ալէք Դաւթեաններ՝ թոռը, իր կինը եւ ծոռը:
Ռոստոմեան, Մանուկեան, Յովհաննիսեան եւ Խանգալդեան ընտանիքներ՝ հարազատները:
Քեշիշեան եւ Դաւթեան ընտանիքներ՝ խնամիները:

ԱԼԻՔ Օրաթերթ
Արտօնատէր՝ ԱԼԲԵՐՏ ԱՃԵՄԵԱՆ
Հեռախօս՝ (0098-21) 88768567 - 88761154
Հեռապատճէն՝ 88760994
Փոստարկղ՝ 11365-953 Թեհրան - Իրան

آلیک
روزنامه سیاسی، اجتماعی، ادبی و هنری
صاحب امتیاز: موسسه جمعیت ادبی آلیک
مدیر مسئول: آلبرت عجمیان
خیابان سهروردی شمالی، خیابان شهید محبی، پلاک ۱۶
کدپستی: ۱۵۵۸۸۳۳۹۱۱
تهران صندوق پستی: ۹۵۳-۱۱۳۶۵ فاکس: ۸۸۷۶۰۹۹۴
تلفن: ۸۸۷۶۱۱۵۴ - ۸۸۷۶۸۵۶۷ چاپخانه آلیک

ALIK ARMENIAN DAILY
Add.: 16, Shahid Mohebi Ave., North Sohravardi Ave.,
Tehran 1558833911, Iran P. O. Box: 11365-953
Tel.: (0098-21) 88768567 -88761154
Fax: 88760994
E-mail : info@alikonline.ir
www.alikonline.ir

ԱՄԷՆ ՏԵՍԱԿԻ
ԼՈՒԱՑՔԻ ԵՒ ԱՄԱՆ ԼՈՒԱՑՈՂ
ՄԵՔԵՆԱՆԵՐԻ ՆՈՐՈԳՈՒՄ
ԲՆԱԿԱՐԱՆՈՒՄ
Հեռ. 26320084 եւ 09124187835,
Վահիկ Իսկանդարեան

## ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏ

Խոր վշտով համակուած յայտնում ենք, որ մեր շատ սիրելի եւ թանկագին՝



### ՌԱՖԻԿ ԱՐԶՈՒՄԱՆԵԱՆԻ

ցաւալի մահուան քառասնօրեակի առթիւ՝ ուրբաթ, հոկտեմբերի 13-ին, Ս. Սարգիս եկեղեցում, ս. պատարագից յետոյ կը կատարուի՝

**ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏ**

Ցաւակցութիւնները՝ եկեղեցում:

**ՍԳԱԿԻՐՆԵՐ՝**

Էմմա Արզումանեան (Ծատուրեան)՝ այրին:
Մարի, Շաւարշ, Ռուբէն եւ Վարազդատ Խեչոյեաններ՝ դուստրը, փեսան եւ թոռները:
Վազգէն, Իւետ եւ Էրիկ Արզումանեաններ՝ որդին, հարսը եւ թոռը:
Ալֆրէդ եւ Իշխանուհի Արզումանեաններ՝ եղբայրը եւ եղբօր կինը՝ ընտանեօք:
Ջւարթ Մալխասեան՝ հարազատը՝ ընտանեօք:
Խեչոյեան, Ծատուրեան, Ալլահդադի, Մովսիսեան եւ Թորոսեան ընտանիքներ՝ հարազատները եւ խնամիները:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀՐԱՒԷՐ
ARAM coffee
«Արամ սուրճ» ընկերութիւնը Ղաէմմաղամ խանութի իր աշխատակազմը լրացնելու համար՝ աշխատանքի է հրաւիրում վաճառորդների եւ վաճառորդուհիների լաւ պայմաններով (حقوق و مزایا):
Հեռ՝ 88492756

# Թեհրանահայութիւնն արցախահայութեան կողքին է

«ԱԼԻՔ», Կ. Դ.- Տեղահանուած եւ հայրենազրկուած արցախցի մեր քոյրերին եւ եղբայրներին աջակցելու նպատակով Թեհրանի հայոց թեմի Թեմական խորհրդի կողմից կեանքի կոչուած յանձնախումբը, այս հարցով միութիւնների հետ համագործակցութեան ծրիում, հոկտեմբերի 9-ին եւ 10-ին Հ. Մ. Մ. «Նայիրի» միութեան յարկի տակ կազմակերպել էր նուիրահաւաք: Յանձնախմբի կողմից նուիրատուներին էր ներկայացրել այն անհրաժեշտ իրերի ցանկը, որոնք գնուելու են հանգանակուած գումարների միջոցով գնուելու եւ ուղարկուելու են արցախցի հայրենակիցներին:

Յատկանշական է, որ հոկտեմբերի 6-ին նուիրահաւաքի աշխատանք է իրականացել նաեւ Հ. Մ. «Արարատ» կազմակերպութեան նախաձեռնութեամբ՝ «Արարատ» մարզաւանում:

Նմանօրինակ աշխատանքներ է նախաձեռնուել նաեւ եկեղեցական խորհուրդների նախաձեռնութեամբ՝ եկեղեցիների շրջափակում:

## ՊԱՂԵՍՏԻՆԵԱՆ....

(Շար. 1-ին էջից)

*-Մեր թշնամին նոյնն է, ինչ՝ Իսրայէլը: Ունի նոյն ձեռագիրը եւ գործում է նոյն ոճով, ու փորձում է արժեզրկել եւ առ ոչինչ դարձնել մեր 30 տարուայ պայքարն ու յաղթանակները,*

*-ինչպէս պաղեստինցիների դէպքում, մեր պարագայում եւս թշնամին փորձում է արցախեան ազատամարտը ներկայացնել որպէս մի խումբ «ահաբեկիչների» նախաձեռնութիւն, այլ՝ ոչ թէ հայ ժողովրդի ազգային-ազատագրական պայքարի արդիւնք: Սա ուղղակի մեզ բարոյազրկելու, նկարագրից եւ ինքնութիւնից պարպելու, մեր պատմութիւնը արժեզրկելու եւ ողնաշարը փշրելու նպատակային գործողութիւն է,*

*-Հայաստանում կայ հակաազգային մի իշխանութիւն, որը ենթադրեալ խաղաղութեան հասնելու համար, դարձել է թշնամու կամակատարը, լիովին յանձնուել է նրա ողորմածութեանն ու հրաժարուել է մեր հայրենիքի անքակտելի մի մասից, ազգային ինքնութիւնից, յաղթանակներից ու տեսլականներից,*

*-միջազգային հարթակներում Հայաստանը դարձել է անտեսակէտ մի պետութիւն, իսկ մեր ապագայի վերաբերեալ բոլոր սցենարները կազմւում են առանց մեր մասնակցութեան,*

*-գործ ունենք, մի իշխանութեան հետ, որն ի վիճակի չէ եւ չի էլ ցանկանում ձեւակերպել ազգային եւ պետական շահերից բխող օրակարգ,*

*-նման իշխանութիւններին է հնարաւոր պարտադրել ամէն ինչ եւ պահանջել նորանոր զիջումներ:*

*Սա է մեր գորշ եւ անյատակ թւացող իրականութիւնը, որից դուրս գալու համար մեզ անհրաժեշտ է Հայաստանում օր առաջ ձեւաւորել ազգային նկարագրի տէր, պայքարի կամք եւ վճռակամութիւն ունեցող բոլորովին նոր որակի իշխանութիւն, որն ի վիճակի կը լինի ձեւակերպել պետական եւ ազգային օրակարգ, առկայ մարտահրաւէրների եւ սպառնալիքների համար առաջարկել ռացիոնալ, խելամիտ լուծումներ, եւ օգտագործելով հնարաւոր ցանկացած միջոց՝ խառնելու այսպէս կոչուած բանակցային սեղանի վրայ առկայ խաղաքարտերն ու հրաժարուել մեզ պարտադրւող պայմաններից, զրոյացնելով ընթացող պրոցեսը:*

*Սա է մեր միակ փրկօղակը, որի համար այլընտրանք գոյութիւն չունի:*

*Պաղեստինը ցոյց տուեց մեզ, թէ ինչպէս է պէտք վարուել ամենաանելանելի պայմաններում: Անշուշտ, եթէ կամենանք, մենք եւս կարող ենք վարուել նոյնկերպ: Յիշե՛նք. Մենք ոչնչով չենք զիջում պաղեստինցիներին, իսկ մեր թշնամին էլ ոչ աւելի հզօր է, քան Իսրայէլը:*

*Սա է ողջ իրականութիւնը, իսկ ընտրութիւնը մերն է:*

1961
Փերիոյ Կրթ. Մ. 1928 1991- Թեհրան
Հ. Մ. «Սիփան» միութեան նախաձեռնութեամբ՝
Իրանահայ Գրողների եւ
Փերիոյ կրթասիրաց միութիւնների
համագործակցութեամբ
ՍՐԲՈՑ ԹԱՐԳՄԱՆՉԱՑ
ՏՕՆԻՆ ՆՈՒԻՐՒԱԾ ՁԵՌՆԱՐԿ
Թւականիս շաբաթ, հոկտեմբերի 14-ին,
երեկոյեան ժամը 6:00-ին
«Սիփան» միութեան «Նայիրի» սրահում:

Երկու տարբեր թռիչքներ դէպի՝ Հայաստան
ԹԵՀՐԱՆ - ԵՐԵՒԱՆ - ԹԵՀՐԱՆ
هواپیمایی ایران ایرتور IRAN AIRTOUR AIRLINES
هواپیمایی قشم QeshmAir
برای تهیه بلیط می توانید با
شرکت حمل و نقل بین المللی و مسافرتی ستی
ستی Sati
۰۲۱-۸۸۵۴۱۲۴۲-۵ و ۸۸۵۴۱۲۹۸- ۹ agency@sati-co.com
و در شهر اصفهان با آژانس آرمان گشت «ناربه ژاردن» ۰۹۱۳۳۰۰۸۰۲۹
و شباهنگ سیر «رافیک خداوردیان» ۰۹۱۳۳۰۵۳۸۳۵ تماس حاصل نمایید.
«ԲԱԶԷ» ՃԱՄԲՈՐԴԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆ
آژانس مسافرتی «بازه»
BAZE TOUR & TRAVEL AGENCY
Հասցէ՝ Կոմիտաս 20, բն. 22, Երեւան, Հայաստան
Հեռախօս՝ +374 965 75 305 եւ + 374 102 22 824
نشانی: خیابان کومیتاس، شماره ۲۲، ایروان – ارمنستان تلفن: ۸۲۴ ۲۲ ۱۰۲ ۳۷۴+ , ۳۰۵ ۷۵ ۹۶۵ ۳۷۴+
Address: Komitas St., Bld.20, Apt. 22 E-mail: info@bazetravel.am

SET Coffee
فروشگاه: هفت تیر، قائم مقام فراهانی، خیابان فجر، پلاک ۱۰
کارخانه: شهرک صنعتی خوارزمی، بلوار ماگنولیا، پلاک ۸۱۱۷
0936-6726563
021-88305827
www.set-coffee.com
قهوه سِت

املاک هنرمندان
● بزرگترین آژانس مسکن
مرکز شهر تهران (منطقه ۶)
● خانه های قدیمی تخصص ماست
آدرس: میدان هفت تیر، کریمخان،
خردمند شمالی، نبش دی، ساختمان ۱۱۹، پلاک۴
تلفن: ۸۸۸۴۵۵۶۶ – ۸۸۸۴۵۵۷۷
واتس آپ: ۰۹۱۲۹۵۸۵۱۴۰
مدیر داخلی (هماهنگی): ۰۹۳۰۹۲۱۳۷۲۴
مدیریت: ۰۹۱۹۴۳۱۸۳۱۹ امیر قربانی

ՔԱՐԻՄԻ
Գորգերի, սառնարանների եւ գազ սպառող զովամուղի, կահոյքի եւ անտիկ իրերի լաւագոյն գնորդ
خریدار فرش، یخچال فریزر، کولر گازی،
مبلمان، خرده ریز و لوازم آنتیک
Հեռ.՝ 88594063 եւ 09121193212

«Արարատ»
Ամէն տեսակ տնային իրերի գնորդ
سماور ذغالی، نقره جات، ظروف مسی،
چراغ لاله و لوستر،
رادیو لامپی ، رادیوگرام مبله، صفحه گرام ،
لوازم چوبی آنتیک و خرده
Հեռ.՝ 88523388

ԱԼԻՔ-ի
Internet-ային էջն է՝
www.alikonline.ir

## «Իսրայէլ-պաղեստինեան....

(Շար. 1-ին էջից)

*սովորաբար պաղեստինեան խմբաւորումների ակտիւացումը, իրանական մեդիա դաշտում ներկայացւել է Իսրայէլին իրանական պատասխան գործողութեան ներկայացման տրամաբանութեան ներքոյ, այսինքն իրանական մեդիայի արձագանգը կարեւոր է դիտարկել քարոզչական այդ հարթութիւնում: Որովհետեւ, զուգահեռաբար տեսնում ենք, թէ ինչպէս է խորանում եւ զարգանում Ադրբեջան-Իրան յարաբերութիւնները եւ կողմերը բաւականաչափ ակտիւ քայլեր են նախատեսում տարբեր համատեղ ծրագրերի իրականացմամբ, եւ զուտ այդ համատեքստում, Իրանը Իսրայէլի դէմ ուղղակի գործողութիւնների չի գնում»,- նշեց նա:*

*Ինչ վերաբերում է պաղեստինեան «դիմադրութեան» շարժման տարածաշրջանային աջակիցների՝ Լիբանանի, Եմէնի, Սիրիայի եւ Իրաքի ուժերի պատերազմին միանալու ՀԱՄԱՍ-ի կոչերին, եւ պատերազմի ընդլայնման հնարաւորութեանը, ապա, Պետրոսեանը շեշտեց, որ Իսրայէլը, Լիբանանի նկատմամբ կանխարգելիչ գործողութիւններ է իրականացրել, որի նպատակն է թոյլ չտալ կամ կանխել Լիբանանի հնարաւոր միջամտութիւնը, որովհետեւ Լիբանանի հնարաւորութիւնները շատ աւելի մեծ են, չնայած այդ երկրում առկայ տնտեսական, քաղաքական եւ հասարակական խորը ճգնաժամին, իսկ «Հեզբոլլահ»-ի միջամտութիւնը կարող է կտրուկ բարդացնել իրավիճակը:*

*«Թէեւ, բաւականաչափ բարդ է կանխատեսելը, թէ արդեօք ռազմական գործողութիւնների մասշտաբները կընդլայնուե՞ն, թէ՝ ոչ, բայց կարելի է շեշտել, որ իսրայէլական կողմը փորձելու է շատ աւելի պատժիչ եւ լայնամասշտաբ գործողութիւններ իրականացնել: Օրինակ, դեռ նախօրէին իսրայէլական բանակը «երկաթէ սրեր» օդային անուանումով գործողութիւն է սկսել եւ կարելի է առանձնացնել, որ պաղեստինցիների կողմից ազատագրուած տարածքները, իսրայէլցիները այսօր յետ են վերցրել»,- նշեց նա:*

*Արմէն Պետրոսեանի խօսքով՝ պաղեստինեան տարբեր խմբաւորումների եւ Իսրայէլի միջեւ բաւականաչափ յաճախ հրահրւող հակամարտութիւնը նաեւ սրուել է այս տարուայ ընթացքում, այսինքն այն նորութիւն չէ եւ պարբերական բնոյթ է կրում, եւ ամէն անգամ նման բախումների ընթացքում կոչ է արւում «դիմադրութեան» շարժման մասնակիցներին ակտիւանալ:*

*Խօսելով այդ շարժման կարեւոր դերակատարների մասին, Արմէն Պետրոսեանը նշեց, որ ներպաղեստինեան խմբաւորումները, «Հեզբոլլահ»-ը, Սիրիայի տարբեր ուժերը, Եմէնի «Անսարօլլահ» խմբաւորումը, աջակցում են «դիմադրութեան» շարժմանը, բայց այս պարգայում ակնկալել, որ այդ մասշտաբի զօրաշարժ է լինելու, այդքան էլ հնարաւոր չէ:*

*Արաբագէտի խօսքով՝ Իրան- Սաուդական Արաբիա յարաբերութիւնների կարգաւորմամբ, նաեւ քիչ կանխատեսելի է, որ Եմէնի «Անսարօլլահ» խմբաւորումը միանայ Պաղեստինի ՀԱՄԱՍ խմբաւորմանը, ինչպէս նաեւ Սիրիայի վերջին շրջանի անկայունութեան պայմանները հաշւի առնելով, դժւար թէ սիրիական կողմից միջամտութիւն լինի ՀԱՄԱՍ-Իսրայէլ դիմակայութեանը:*

*«Իրանի վերաբերեալ անհրաժեշտ է արձանագրել, որ ընդհանուր առմամբ, որքան փորձ է կատարուել Իրանի ներգրաւածութեան մասին եւս խօսել, այնուամենայնիւ, անհրաժեշտ է չմոռանալ, որ Իրանը ՀԱՄԱՍ-ին մշտապէս աջակցել է տեխնոլոգիայով, հրթիռաշինութեան, անօդաչուների եւ այլնի միջոցով: Իրանի հովանաւորութեամբ տեխնոլոգիաները, որոնք առկայ են Գազայի հատուածում դրանք Պաղեստինեան ՋԻՀԱԴ խմբաւորմանն է պատկանում: Այսինքն, այս յարձակումը իրականացել է ՀԱՄԱՍ-ի կողմից առանց իսլամական ջիհադի ներգրաւածութեան, այս պայմաններում, անհրաժեշտ է արձանագրել, որ Իրանի ներգրաւածութիւնը այդ գործողութիւններին առաւելապէս քարոզչական նպատակ է հետապնդում, Իրանին հերթական անգամ թիրախաւորելու նպատակով: Կարծում եմ Իրանն այս պահին պատրաստ չէ նման ռազմական առճակատման մէջ մտնել: Այլ հարց է, որ այս գործողութիւնը բխում է Իրանի շահերից, նախ պայմանաւորուած ներիսրայէլական հնարաւոր ճգնաժամով, եւ Իսրայէլ-Սաուդական Արաբիա յարաբերութիւնների կարգաւորման գործօնով»,- նշեց նա:*

***ՍԻՒՆԷ ՖԱՐՄԱՆԵԱՆ***